



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտերջագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

ստանձնել և տարածել նյութը ցանկացած մեդիայով կամ կրիչով  
մեափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Պրոպագանդայի բոլոր լեռնաբեկները, միացե՛ք:

ԿԱՐԼ ՄԱՐԿՍ ՅԵՆ ՖՐԻԴՐԻԽ ԵՆԳԵԼՍ

ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ

**ԿՆՆԻՑԵՍԱՏ**

Գրեմ. բարձր. Ս. ԿՅՍՅԱՆ

Հ. Ս. Խ. Հ. ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԳՈՒԹՅՈՒՆ

ՅՄԲՍ Կ.Ն.—1927

3K13

A<sup>n</sup> 1888

U-40

Գրաստի և ֆ. Ննդեյր

Գրանցանքային

Տարի ֆևրուար

10a


Խ. Մարտիկյանի 19  $\frac{7}{2}$  27

Պոլիտեմիսի բոլոր յեղիքները, միացե՛ք.

ՍԱՆՔԱՆՔԱԿԱՆ ՖՐԻԴՐԻԻՒՆ ԵՆԳԵԼՍ

0-40

# ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՄԱՆԻԳԵՍՏԸ

202

Գերբ. քարզմ. Ս. ԿՍՍՏՍՆ



Հ. Ս. Խ. Հ. ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1927

Կրտուեց. № 163 ր.

հ. 536

Տիրած 3000.

Պետրատի լերկրորդ տպարան Յերևանում—494

ՆԻՖԻՍ»-Ի ՀԱՅԵՐԵՆ ՔԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԻՔՈՎ

Դանիֆեստ»-ի առաջին հայերեն թարգմանութիւնն, ըստ Են-  
կատարվել է 1887 թվականին: Թե՛ սլ ե լեղել այն խիզախ  
վորն ուղիղ 40 տարի առաջ հանդուգն փորձ է արել ծանոթաց-  
րլսա-«հայութիւնը» կամ տաճկա-«հայութիւնը» կոմմունիզմի  
ն և հեղափոխական սկզբունքների հետ, մենք ստուգապես չը  
ը Զգիտենք նաև այն, թե ինչպիսի թարգմանութիւն է յե-  
քանի վոր ձեռագիրը դարձել է հնութիւն փոշու բաժին:  
ույն այդ վիճակն է ունեցել, ըստ յերևույթին, նաև յերկրորդ  
անութիւնը, վորի մասին մեր սուղ տեղեկութիւն աղբյուրը  
մ է նույնպես Ենգելսի 1894 թվակիր նամակը: Այդ թարգմա-  
ն փորձի հեղինակը նմանապես ստույգ հայտնի չէ: Յերևում  
ն, վոր նա լեղել է մի դաշնակ, վորը, դաշնակցականին հատուկ  
անկութիւնը, ձգտել է իր ազգայնական և հակաբանվորական  
ունը քողարկել «Մանիֆեստ»-ի և սրա յերկրորդ ստեղծագոր-  
արձր հեղինակութիւնը: Սակայն յերբ հեռատես Ենգելսը կըտ-  
տպես մերժել է մի քանի խոսք գրել այդ թարգմանութիւն  
ը կասկածի մեջ լինելով, թե միգուցե իր «խոսքերը անգիտակ-  
թերևս գիտակցորեն խեղաթյուրվեն», ինքը թարգմանիչը և  
լիստ» հրատարակչութիւնը «նպատակահարմար» են գտել ցե-  
հանձնել ձեռագիրը: Ուստի այդ թարգմանութիւնն էլ չգի-  
ինչպես է կատարվել:

Սակայն «Մանիֆեստ»-ի հայերեն հրատարակությունն ունեցել է վճի միայն այսպես ասած **ճախագատություն**, այլև «գրք առնված» պատմություն:

Յերբ կապիտալիզմի զարգացումը կովկասում թեակոխու՝ եր իր հասունություն ժամանակաշրջանը և զրա հետ միասին ստվարացած հայ բանվորության առաջավոր շարքերն այլևս գիտակցում էին «Հնչակ»-ի և «Դրոշակ»-ի ազգայնական-քաղաքնական միասններն կեղծ սոցիալիստական բարբառանքները, նրանք միջոցներ էին գործում յուրացնել բանվորական «ավետարանը»: Դաժան իրականություն ստիպում էր նրանց առժամապես «բավականանալ» կցկրտուր, ձեռնով գրված տետրներով: Սակայն հրամայական պահանջն ուժգնորեն թելադրում է հրապարակի վրա դնել ամբողջական **պագիր** թարգմանությունը:

Առաջին անգամ «Մանիֆեստ»-ի հայերեն հրատարակությունը լույս է տեսնում 1906 թվականին՝ առաջին ռուսական հեղափոխության որերին՝ Մանուշարյանի թարգմանությամբ: Վերջան էլ անբավարար լիներ այդ թարգմանությունը, բայց և այնպես մեր մարքսիստական միտքը հաշտվում էր զրա հետ՝ մի շարք պատճառների շնորհիվ: Հետևյալ յերկու հրատարակությունները լույս են տեսնում Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո՝ ընկ Գ. Մակինցյանի թարգմանությամբ: Սակայն այդ թարգմանությունն էլ անբավարար է: «Մանիֆեստը» կլասիկ ստեղծագործություն է. թարգմանությունն էլ պետք է կարելուին չափ նմանեցնել զրան: Պետք է այն վճի թե բառացի թարգմանել՝ առանց ըմբռնելու, առանց խորապես պատկերացնելու այդ անմահ գործի հանճարեղ մտքերի հակիրճ ձեակերպումները: միաժամանակ վտանակոխ անելով թարգմանության լեզվի հատկությունները, այլ ճալ աճխալ կերպով այդ ձեվակերպումները, պահել այդ աճխասության շեռի ու ճոճի հսկայական ույծը, վոճի ուրույնությունը, ընթերցման սահունությունը, բոլոր զեպներում էլ պահպանելով գյուրմբճանկիությունն ու հայոց լեզվի որճոճները:

Հաջողվել է արդյոք մեղ կիրառել բոլոր այդ պահանջները սույն թարգմանության մեջ, կարող է ասել միմիայն քննադատությունը: Վերջան խիստ լինի այդ վերջինը, այնքան ավելի ողուտ է գործին:


պետք է, վերջապես, հայերեն ևս ունենալ մի անխոցելի, ընդհանուրի  
համահունքունը գտած թարգմանութիւնը:

\* \*  
\*

Պարտք ևս համարում հրապարակորեն հայտնել իմ շնորհակալու-  
թիւնն ընկ. Ա. Մելիքյանին՝ իր տված մի շարք խորհուրդների համար,  
ինչպես նաև ընկ. Գ. Մելոյանին, վորը սիրալիր ստանձնել և լեզվա-  
կան ու սրբագրական ծանր աշխատանքը:

Ս. ԿՅՍԵՍՆ





ԱՌԱԶԱԲԱՆՆԵՐ



«Կոմմունիստները Միութունը», վոր միջազգային բանփորական մի կազմակերպութիւն եր և վորն այն ժամանակվա պայմաններում բնականաբար կարող եր լինել միմիայն գաղտնի, 1847 թվականի նոյեմբերին Լոնդոնում տեղի ունեցած իր համագումարում հանձնարարեց ներքո ստորագրուաներիս կազմել կոմունիստական մանրամասն տեսական ու գործնական ծրագիրը՝ լույս ընծայելու համար: Այդպես և ահա ծնունդ տուել ստորե բերված Մանիֆեստը, վորի ձեռագիրն ուղարկվեց Լոնդոն տպագրութիւն համար՝ փետրվարուան հեղափոխութիւնից մի քանի շաբաթ առաջ: Հրատարակվելով ամենից առաջ գերմաներեն՝ Մանիֆեստն ալ լիզգով ունեցել և առնվազն տասներկու դանազան տպագրութիւն Գերմանիայում, Անգլիայում և Ամերիկայում: Անգլերեն առաջին անգամ լույս և տեսել Լոնդոնում 1850 թվականին «Red Republican»-ի («Կարմիր Հանրապետական»-ի)\* մեջ՝ միսա Հելեն Մակֆերլենի թարգմանութեամբ, իսկ հետո Ամերիկայում 1871 թվականին՝ առնվազն յերեք տարբեր թարգմանութեամբ: Յերանսերեն առաջին անգամ լույս և տեսել Փարիզում 1848 թվականի հունիսյան ապստամբութիւնից քիչ առաջ, ապա Նյու-Յորքի «Le Socialiste»-ի («Սոցիալիստ»-ի) մեջ: Այժմ պատրաստվում և մի նոր թարգմանութիւն: Լեհերեն լույս և տեսել Լոնդոնում՝ գերմաներեն առաջին հրատարակութիւնից քիչ անց: Ռուսերեն՝ ժննում 60-ական թվականներին: Իսպաներեն թարգմանութիւնը հրատարակվել և բնագրի առաջին հրատարակութիւնից նույնպես մի քիչ անց:

Վորքան ել վերջին քսանհինգ տարվա ընթացքում խիստ փոխված լինեն պայմանները, այնուամենայնիվ այս Մանիֆեստում արժարժիքով հիմնական սկզբունքներն ալսոր ել մնում են ընդհանուր առմամբ կատարելագոս ճիշտ: Իսկ այս կամ այն առանձին կետերը կարող կլինելին ուղղումների Ինքը՝ Մանիֆեստը պարզ ասում և, վոր ալ սկզբունքների գործնական կիրառումն ամենուրեք և ամեն ժամանակ կարված և պատմականորեն դասավորված հանգամանքներից ուստի առանձին նշանակութիւն չպիտի տալ յերկրորդ գլխի վերջում

\*) Ինչպես այտեղ, այնպես ել տեքստի այլ տեղերում քառակուսի փակագծերի մեջ տակ ենք այն ոտար բառերը, արտահայտութիւնները, անունները և այլն. վորոնք գերմաներեն բնագրում թարգմանված չեն:

առաջարկված հեղափոխական միջոցներին Այդ մասն այսօր կարող եր շատ կողմերով ուրիշ կերպ արտահայտվել: Խոշոր արդյունազործութիւն վերջին քսանհինգամյակի ընթացքում ունեցած հսկայական հառաջադիմութիւն և դրա հետ միասին բանվոր դասակարգի կուսակցական կազմակերպութիւն զարգացման շնորհիվ, մի զարգացման, վորը հետևանք եր գործնական փորձի նախփետրվարյան հեղափոխութիւն և ապա առավել ևս Փարիզի կոմմունայի, յերբ պրոլետարիատն առաջին անգամ քաղաքական իշխանութիւն տեր եր դարձել չերկու ամսվա ընթացքում, այդ ծրագիրը տեղ-տեղ արդեն ննացել և: Հենց Փարիզի կոմմունան ապացուցեց, վոր բանվոր դասակարգը չի կարող պետական պատրաստի մեքենան պարզապես իր ձեռքն առնել և շարժման մեջ դնել այն հոգուտ իր սեփական նպատակներէ» (տես «Քաղաքացիական կռիվը Յրանսիայում, Բանվորների Միջազգային Միութիւնի Գերագույն Խորհրդի հաշվետվութիւնը», գերմաներեն՝ հրատարակութիւն, էջ 19, ուր այդ միտքը լուսարանված և հանգամանորեն): Ապա պարզ և, վոր սոցիալիստական գրուկանութիւն քննադատութիւնն այսօրվա համար նույնպես թերի յե, վորովհետև այն հասցրած և մինչև 1847 թվականը: Հնացել են նմանապես այն նկատողութիւնները, վորոնք վերաբերում են կոմմունիստներին՝ զեպի զանազան ընդդիմադիր կուսակցութիւններն ունեցած գիրքին (գլուխ IV): Վորքան ել զրանք այսօր ևս ընդհանուր առմամբ ճիշտ լինեն, այնուամենայնիվ մանրամասնութիւնները ննացել են այժմ հենց այն պատճառով, վոր ամբողջովին փոխվել և քաղաքական գրութիւնը, և այնտեղ հիշատակված կուսակցութիւններից շատերը պատմական զարգացմամբ վերացել են աշխարհից:

Բայց և այնպես մենք մեր իրավունքը չենք համարում փոփոխութիւն լինթարկել Մանիֆեստը, վորն արդեն պատմական փաստաթուղթ և: Թերևս հետևյալ հրատարակութիւնը լույս տեսնի մի տեսութիւնով, վոր կը կամրջի 1847 թվականը մեր որերի հետ: Սույն արտատպութիւնը՝ չափազանց անսպասելի լեզավ մեզ համար, այնպես վոր ժամանակ չունեցանք այդ անելու:

Կառլ Մարքս, Ֆրիդրիխ Ենգելս

Լոնդոն, 24 հունիսի 1872 թ.

Ներկա հրատարակութեան առաջարանը չես պիտի տարաբախտաբար մենակ ստորագրեմ: Մարքսը, այն մարդը, վորին Յեկթրոպայի և Ամերիկայի վողջ բանվոր դասակարգն ավելի չի պարտական, քան ուրիշ վորևէ մեկի,—այդ մարդը հանդուժեալ և Highate (Հայգեստի) գերեզմանատանը, և նրա շիրիմի վրա աճուժեալ և արդեն առաջին դալարը<sup>\*)</sup>: Նրա մահից հետո արդեն բնավ խոսք չի կարող լինել Մանիֆեստի վերամշակման կամ ամբողջացման մասին: Դրա համար ել առավելագուստ անհրաժեշտ եմ համարում այստեղ մի անգամ ևս կտրականորեն շեշտել հետևյալը:

Մանիֆեստի հիմնական միտքը, այն, թե ամեն մի ժամանակաշրջանի քաղաքական ու մտավոր պատմութեան հիմքը կազմում և այդ ժամանակաշրջանի անտեսական արտագրութիւնը և դրանից անհրաժեշտորեն բխող հասարակական կազմը՝ թե ըստ այդմ ել ամբողջ պատմութիւնը (նախնական համայնաճողատիրութեան քայքայումից սկսած)՝ դասակարգային կոնֆլիկտի պատմութիւն և լեզուի, շահագործվող և շահագործող, իշխվող և իշխող դասակարգերի կոնֆլիկտի հասարակական զարգացման զանազան աստիճանների վրա. թե այդ կոնֆլիկտային սակայն հասել և այն աստիճանի, ուր շահագործվող ու ճնշված դասակարգը (պրոլետարիատը) չի կարող այլևս ազատագրվել շահագործող և ճնշող դասակարգից (բուրժուազիայից) առանց ընդմիջապէս ազատագրելու միաժամանակ ամբողջ հասարակութիւնը շահագործումից, ճնշումից և դասակարգային կոնֆլիկտից—այդ հիմնական միտքը պատկանում և միայն և բացառապէս Մարքսին:<sup>\*\*)</sup>

Յես շատ անգամ եմ արտահայտել այդ, բայց անհրաժեշտ է, վոր նույնն ասված լինի հենց այժմ, նախադրելով զա Մանիֆեստին:

Ք. Եճգիւս

Լոնդոն, 28 հունիսի 1883 թ.

\*) Սույն առաջարանը զգում և Մարքսի մահից մտ յերեք ամիս անց: Մարքսը վախճանվել և Լոնդոնում 1883 թվականի մարտի 14-ին: Ս. Կ.

\*\*) Վեյդ միտքը,—ասում եմ չես անգլիերեն թարգմանութեան առաջարանում,— վորը, իմ կարծիքով, կոչված և հիմք զնելու պատմագիտութեան նույն առաջագիմութեանը, վորպիտի առաջագիմութեան հիմք և զրել Դարվինի թեորիան բնագիտութեան համար,—այդ միտքը մենք յերկուսս ել հրացել էյինք հետզհետե մի բանի տարվա ընթացքում մինչև 1845 թ.: Քե վորքան եմ չես ինքնուրույնաբար առաջ զնացել այդ ուղղութեամբ՝ ցույց և առիթ իմ շեմնվոր դասակարգի դրութիւնն Անգլիայում աշխատութիւնը: Բայց յերբ 1845 թվականի զարմանք չես կրկին հանգիտեցի Մարքսին Բրյուսսելում, նա վերջնականապէս մշակած ունէր այդ միտքը, և այն ներկայացրեց ինձ համարյա նույն պարզ խոսքերով, ինչ խոսքերով վոր չես նկատեցրել եմ վերջս:

Նախորդ գրութիւնն ից հետո կրկին անհրաժեշտութիւնն և զգաց-  
-վել Մանիֆեստի գերմաներենն նոր հրատարակութիւնն: Յեղ հենց  
-Մանիֆեստի պատմութիւն մեզ էլ տեղի չեն ունեցել զանազան  
-փաստեր, վոր հիշատակելու յե այստեղ:

Ռուսերեն լեկրորդ հրատարակութիւնն—Վերա Զասուլիչի թարգ-  
-մանութիւնն—լույս և տեսել 1882 թվականին ժնեում<sup>\*)</sup>: Այդ հրա-  
-տարակութիւնն առաջարանի գերմաներենն բնագիրը: Վոր գրել ենք  
-Մարքսը և յես, տարարարտարար կորսվել և, և յես, հետևարար, հար-  
-կազրված եմ ուսերենից յետ թարգմանել, մի բան, վորից զրվածքն  
-ամեննին չի շահում: Ահա այդ առաջարանը<sup>\*\*)</sup>

«Կոմմունիստական կուսակցութիւնն Մանիֆեստի առաջին ուսե-  
-րեն հրատարակութիւնը Բակունինի թարգմանութիւնն լույս և տե-  
-սել վաթսունական թվականների սկզբներին «Колокол»-ի տպարա-  
-նում: Այն ժամանակները Մանիֆեստի ուսերեն հրատարակու-  
-թիւնը կարող եր նկատվել Արեմուտքում վո՛չ ավել, քան գրական  
-կուլտուր: Ներկայումս այդպիսի հայացք անկարելի կը լիներ: Թե Մա-  
-նիֆեստի առաջին հրատարակութիւնն (հունվար 1848 թ.) ժամանա-  
-կաշրջանում բանվորական շարժումը վորքան սահմանափակ եր, զրա  
-լավագույն ապացույցը կազմում և նրա վերջին գլուխը՝ «Կոմմունիստ-  
-ների դիրքը գեպի զանազան լեռկիրների զանազան ընդդիմադիր կու-  
-սակցութիւնները»: Այստեղ բացակայում են հենց Ռուսաստանն ու  
-Միացյալ Պետութիւնները: Դա մի ժամանակ եր, լերը Ռուսաստանը  
-վողջ լեվրոպական սեակցիայի վերջին խոշոր պահեստն եր: Արտա-  
-գաղթը գեպի Միացյալ Պետութիւնները կլանում էին լեվրոպական  
-պրոլետարիատի ավելորդ ուշտերը: Այդ յերկու լեռկիրները մատակա-  
-րարում էին Յեվրոպային հում նյութ և միաժամանակ հանդիսանում  
-նրա արդունագործական արտադրվածքների վաճառքի շուկան: Նրանք  
-յերկուսն էլ, հետևարար, այս կամ այն կերպ Յեվրոպայի հասարակա-  
-կան կարգերի հենարանն էին:

«Վորքան փոխվել և այսոր այդ ամենը: Յեվրոպական արտա-  
-գաղթն և հենց, վոր հնարավոր և դարձրել Հյուսիսային Ամերիկայի  
-հողագործութիւնն հսկայական զարգացումը, վորն իր մրցութիւնն

<sup>\*)</sup> Ըյազանովը «Մանիֆեստ»-ի իր հրատարակութիւնն մեզ տոււ և, թե են-  
-գելու սխալում և. թարգմանութիւնն արել և վո՛չ թե Վերա Զասուլիչը, այլ Պի-  
-թանովը:

<sup>\*\*)</sup> Ավելի հարազատ լինելու համար՝ այդ առաջարանը բերում ենք ուսերեն  
-սկզբնական թարգմանութիւնից, վորը զեակզված և Ռյազանովի հրատարակու-  
-թիւնն մեզ:

հիմնովին սասանում է Յեվրոպայի թե խոշոր և թե մանր հողատիրութիւնը: Եւ, բացի այդ, հնարավորութիւն է ավել Միացյալ Պետութիւններին դիմելու արդունագործական զարգացմանը նպաստող իրենց հարուստ աղբյուրների շահագործմանը, այն ել այնպիսի չափերով ու այնպիսի յեռանդով, վոր կարճ ժամանակից հետո վերջ դնե Արեւմտյան Յեվրոպայի արդունագործական մենաշնորհին: Այդ յերկու հանգամանքներն ազդելու յեն նաև Ամերիկայի վրա հեղափոխական իմաստով: Ֆերմերների մանր ու միջին հողասեփականութիւնը, վոր կազմում է Ամերիկայի վողջ քաղաքական կարգերի հիմքը, ավելի ու ավելի յե քայքայվում խոշոր ֆերմաների մրցութեամբ. միևնույն ժամանակ արդունագործական շրջաններում սկսում է զարգանալ բազմաթիվ պրոլետարիատ՝ կապիտալի առասպնելական կոնցենտրացիային զուգընթաց:

«Անցնենք Ռուսաստանին, 1848—1849 թվականների հեղափոխութեան ժամանակ վնջ միայն յեվրոպական միապետները, այլև յեվրոպական բուրժուաները՝ իր ուժերը նոր-նոր հավաքող պրոլետարիտից փրկվելու համար՝ միակ յելքը գտնում եյին Ռուսաստանի միջամտութեան մեջ միայն: Յարին նրանք հռչակեցին յեվրոպական ռեակցիայի գլուխը: Այսոր նա նստած է Գաաչինայում՝ վորպես հեղափոխութեան ռազմագետ, և Ռուսաստանը ներկայումս Յեվրոպայի հեղափոխական շարժման ռահվիրան է:»<sup>\*)</sup>

Կոմմունիստական Մանիֆեստի նպատակն էր հռչակել արդի բուրժուական սեփականութեան անխուսափելի վերահաս կործանումը: Սակայն Ռուսաստանում կապիտալիստական կարգերի տենդային զարգացման և միայն այժմ կազմվող բուրժուական հողասեփականութեան կողքին մենք տեսնում ենք հողի խոշորագույն մասի գլուղացիական համայնատիրութիւնը:

«Արդ՝ հարց է ծագում. կարո՞ղ և արդո՞ք ռուսական գյուղահամայնքը, նախնական համայնահողատիրութեան այդ արդեն խիստ քայքայված ձևը, անմիջապես անցնել հողատիրութեան բարձր, կոմմուն-

\*) Սույն առաջարկը զրգած է Ալեքսանդր Ու-ի սպանութիւնից մի քանի ամիս հետո: «Народная Воля»-ն այդ ժամանակ հասել էր իր ժողովրդականութեան դառաթնակեալին: Ալեքսանդր Ու-ը՝ նստած Գաաչինայում՝ շարունակում էր հետազոտել «Թաղաղորութեան նանդերը»: Միայն 1883—1884 թվականներին վերջնականապես պարզվեց, վոր «Народная Воля»-ի ամենախոշոր հաղթութիւնը միևնույն ժամանակ նրա պարտութիւնն էր, և վոր Յեվրոպայում հեղափոխական շարժման ռահվիրա գտնոցն իրերի բերմամբ դարձավ յուր յերկրում առաջապահ առանց հեղափոխական զորքի, ու թեաթափ յեղա՞վ հերոսական, սակայն աննպատար կոմունիստական ցարիզմի դեմ:



նխատական ձևին, թէ ընդհակառակը, նա պետք է սկզբում քայքայման նույն պրոցեսան անցնի, վորով բնորոշվում է Արևմուտքի պատմական զարգացումը:

«Այդ հարցի միակ հնարավոր պատասխանն այսոր հետևյալն է: Տե՛քե՛ս ուստական հեղափոխությունն Արևմուտքի բանվորական հեղափոխության ազդանշանը լինի, այնպես վոր նրանք լերկուան եւ լըրացնեն իրար, ապա արդի ուստական համայնահողատիրությունը կարող է կոմմունիստական զարգացման լելակետը դառնալ»:

Լոնդոն, 21 հունվարի 1882 թ.

Համարյա նույն միջոցին ժնկում լույս տեսավ լեհերեն մի նոր թարգմանություն — «Manifest kommunistyczny»:

Ապա լույս տեսավ գանիլերեն մի նոր թարգմանություն՝ «Socialdemokratisk Bibliothek», Kjöbenhavn 1885-ին [«Սոցիալ-դեմոկրատական գրադարան»-ում, Կոպենհագեն 1885 թ.]: Այդ թարգմանությունը, զժբախտարար, այնքան էլ լիակատար չէ. մի քանի ելյական կետեր, վորոնք ըստ յերևույթին՝ զժվարություն են հարուցել թարգմանչի համար, բաց են թողնված, ինչպես նաև տեղ-տեղ նըկատված են շտապողականության հետքեր, վորոնք մանուփանդ անախորժ են այն պատճառով, վոր թարգմանիչն, ըստ յերևույթին, խնամկոտ վերաբերվելով, կարող էր անհամեմատ ավելին տալ:

1886 թվականին լույս տեսավ մի նոր Ֆրանսերեն թարգմանություն «Le Socialiste»-ի («Սոցիալիստ»)-ի մեջ Պարիզում. դա լավագույնն է մինչև այժմ լույս տեսածներից\*):

Դրանից հետո, նույն տարվա ընթացքում լույս տեսավ իսպաներեն թարգմանությունը՝ նախ «El Socialista»-ի («Սոցիալիստ»)-ի մեջ Մադրիդում և ապա առանձին գրքուկով — Manifiesto del Partido Comunista por Carlos Marx y F. Engels, Madrids, Administracion de el Socialista. Hernan Cortés 8:

Իբրև կուրյոզ հիշատակելու չե, վոր 1887 թվականին պոլսեցի մի հրատարակչի առաջարկված և չեղել Մանիֆեստի հայերեն թարգմանության ձեռագիրը, սակայն այդ բարի մարդը քաջություն չի ունեցել հրատարակելու մի բան, վորը կրում էր Մարքսի անունը. նա ավելի լավ էր համարել, վոր իբրև հեղինակ հանդես գա ինքը՝ թարգմանիչը. մի խորհուրդ, վորից վերջինս ի հարկե պիտի հրաժարվեր:

Այս կամ այն ավելի կամ պակաս անձիշտ ամերիկյան թարգմանությունների Անգլիայում հրատակված մի շարք արտատպություն-

\*) Դ. Բյազանովի ծանոթության համաձայն՝ այդ թարգմանությունն արել են լաֆարգ ամուսինները՝ Պոլը և Կաուրան (վերջինս Մարքսի աջակիցը): Ս. 4.

ներից հետո վերջապես լույս տեսավ 1888 թվականին վավերական թարգմանությունը: Վերջինս արել է իմ բարեկամ Սաժուել Մուրեն, իսկ տպագրությունից առաջ մենք չերկուսս կրկին աչքի չենք անցրել այն: Այդ հրատարակության լիակատար վերատառությունն է Manifesto of the Communist Party, by Karl Marx and Frederick Engels. Authorized english Translation, edited and annotated by Frederick Engels. 1888 London, William Reeves, 185 Fleet st. E. C.: Այդ հրատարակության իմ մի քանի ծանոթությունները բերված են սույն հրատարակության մեջ:

Մանիֆեստն ունեցել է իր կյանքի հատուկ ընթացքը: Մինչդեռ նրա առաջին հրատարակությունը խանդավառ ընդունելություն գտավ (ինչպես չերևում է առաջին նախաբանում թված թարգմանություններից) գիտական սոցիալիզմի ռազմավարների կողմից, վոր այն ժամանակ տակավին փոքրթիվ էին, այնինչ Փարիզի բանվորների 1848 թվականի հունիսյան պարտությունից սկսած՝ բնակչիան շուտով մի կողմ նետեց այն և վերջապես Քյոլնի կոմունիստների վերաբերմամբ 1852 թվականի նոյեմբեր ամսին հանված դատավճռով արգելքի ու բանադրանքի չենթարկվեց «հանուն օրենքի»: Իսկ չերք փետրվարյան հեղափոխությամբ սկիզբ առած բանվորական շարժումը վերացավ հասարակական տպարեղից, ապա Մանիֆեստն էլ մի կողմ նետվեց:

Յերբ լեվրոպական բանվոր դասակարգը կրկին բավականաչափ ուժեղացավ՝ տիրոջ դասակարգի վրա մի նոր հարձակում գործելու համար, առաջ լեկավ «Բանվորների Միջազգային Լ՛նկերությունը»: Արա նպատակն էր մի մեծ բանակի մեջ ձուլել Յեվրոպայի և Ամերիկայի վողջ պայքարող բանվորությունը: Ուստի նա չեր կարող լիլնել Մանիֆեստի հիմնական սկզբունքներից: Նա պարտավոր էր ունենալ մի ծրագիր, վոր չփակեր իր դուռը անգլիական տրեդ-ունիոնների, ֆրանսիական, բելգիական, իտալական ու սպանական պրոլետնիստների և գերմանական լաստայականների\*) առջև: Այդ ծրագրերը—Ինտերնացիոնալի կանոնադրության ներածությունը—նախագծել էր Մարքսը մի այնպիսի վարպետությամբ, վոր խոստովանում էին անգամ Բակունինը և անարխիստները: Մանիֆեստում առաջադրած սկզբունքների վերջնական հաղթանակը Մարքսը սպասում էր

\*) Լաստայն անձամբ մեզ միշտ խոստովանել է, թե ինքը Մարքսի «այսպիսի» արն է և վորպես այդպիսին, ի հարկի, կանգնած է չեղել Մանիֆեստի տեսակետի վրա: Այլ են նրա այն հետևողները, վորոնք նրա առաջադրած «արտադրողական ընկերություններ պետական վարկո՞ւ պահանջից զենք չեին անցնում և վորոնք վողջ բանվոր դասակարգը բաժանում էին պետական ոգնություն և ինքնուգնության կողմնակիցներ:

միայն և միմիայն բանվոր դասակարգի մտավոր զարգացումից, վորն անհրաժեշտորեն պիտի բղխեր համազործակցութիւննից և մտքերի փոխանակութիւննից: Կապիտալի դեմ մղված պայքարի անցքերն ու զեպքերը, ավելի ևս պարտութիւննները, քան հաջողութիւննները, անպայմանորեն պիտի պարզելին պայքարողներին այն վողջաշխարհարմանող միջոցների թերութիւնը, վոր նրանք առաջ ընդունելի ելին համարում, և նրանց գլուխները դարձնելին ավելի կարող՝ բանվորների ազատագրութիւն ճշմարիտ պայմանները հիմնովին յուրացնելու համար: Յեւ Մարքսն իրավացի լեր: 1874 թվականին՝ Լոտերնացիոնայի քայքայման ժամանակ բոլորովին այլ եր բանվոր դասակարգը, քան 1864 թվականին՝ այդ ընկերութիւն հիմնավորման ժամանակ: Պրուդոնիզմը սոմանական լերկրներում, յուրահատուկ լասսալականութիւնը Գերմանիայում վերանալու վրա ելին, իսկ անգլիական տրեդ-ունիոնները, վոր այն ժամանակ չափազանց պահպանողական ելին, հասել ելին այն կետին, յերբ 1887 թվականին Սուոնսիյում տեղի ունեցած իրենց կոնգրեսի նախագահը կարողացավ ասել նրանց անունից. «Ճամաքային սոցիալիզմը կորցրել է իր սարսափը մեզ համար»: Բայց «ցամաքային սոցիալիզմը» 1887 թվականին գրեթե բացառապէս այն տեսութիւնն էր, վոր առաջագրված էր Մանիֆեստում: Այդպիսով Մանիֆեստի պատմութիւնը վորոշ չափով ցոլացնում է ժամանակակից բանվորական շարժման պատմութիւնը՝ սկսած 1848 թրվականից: Ներկայումս դա վողջ սոցիալիստական գրականութիւն մեջ անտարակույս, ամենատարածված, ամենամիջազգային յերկն է, Սիբրիբից մինչև Կալիֆորնիա բոլոր յերկրների բազմամիլիոն բանվորների ընդհանուր ծրագիրը:

Բայց և այնպէս Մանիֆեստը լույս ընծայելու ժամանակ մենք չանվանեցինք այն սոցիալիստական: 1847 թվականին սոցիալիստ ասելով հասկանում ելին յերկու տեսակ մարդիկ: Մի կողմից զանազան ուտոպիստական սիստեմների կողմնակիցները, ժամանավորապէս Ուենսթաններն Անգլիայում և Ֆուրիերիստները Ֆրանսիայում, վորոնք արդէն այն ժամանակ այլաստելի ու վեր ելին անվել հեղադհետե մեծնող աղանդների: Մյուս կողմից սոցիալիստ անվանվում ելին պեսպիսի սոցիալական դարմանողներ, վորոնք հասարակական ցավերը բուժել ելին ուզում իրենց զանազան վողջաշխարհարմանող միջոցներով ու հազար տեսակ կարկատաններով՝ առանց մագաչափ անգամ ցավ պատճառելու կապիտալին և ոգուտին: Յերկու զեպքումն ել այդ մարդիկ հետո ելին կանգնած բանվորական շարժումից և նեցուկ վորոնում ավելի շուտ «կրթված» դասակարգերի մեջ, Ընդհակառակը, բանվորութիւնն այն մասը, վորը, համողվելով լոկ քաղաքական հեղաշրջումների անբավարարութիւնն մեջ, պահանջում էր հասարակութիւնն

հիմնական ձևափոխում, այն ժամանակներն իրեն անվանում եր կոմ-  
**մունիստական**: Դա զեռ միայն լավ շճակված, լոկ բնազդական,  
 չերբեմն կոպիտ կոմմունիզմ եր: Սակայն նա այնքան ուժեղ եր, վոր  
 ստեղծեց ուսուցիական կոմմունիզմի չերկու սխտեմ—Ֆրանսիայում  
 Կարենյի «իկարիական» կոմմունիզմը, Գերմանիայում Վայտլինգի կոմ-  
 մունիզմը: 1847 թվականին սոցիալիզմի տակ հասկացվում եր բուր-  
 ժուական շարժում, իսկ կոմմունիզմի տակ՝ բանվորական շարժում:  
 Սոցիալիզմը՝ աննվազն կոնսերվատիվ սալոնական եր, իսկ կոմմու-  
 նիզմը՝ ճիշտ դրա հակառակը: Յեղ վորովհետև մենք զեռ այն ժամա-  
 նակ ամենավճռական կերպով այն կարծիքին ելինք, թե «բանվորնե-  
 րի ազատութունը պետք ե լինի հենց բանվոր դասակարգի գործը»,  
 ապա շեյխեր կարող մի ակնթարթ անգամ տատանվել, թե վորն ընտ-  
 րել չերկու անունից: Հետագայումն ել մեր մտքովն անգամ չի անցել  
 հրամարմելու ընդունած անունից:

«Գրոլետարներ բոլոր չերկրների՝ միացեք»:

Քիչ ձայներ միայն արձագանք տվին, չերր մենք այդ կոչը  
 աշխարհ նետեցինք 42 տարի առաջ, Փարիզի առաջին հեղափո-  
 խության նախորդակին, մի հեղափոխության, վորի մեջ պրոլետարիատը  
 հանդես չեկավ իր սեփական պահանջներով: Բայց 1864 թվականի  
 սեպտեմբերի 28-ին Արևմտյան Յեվրոպայի չերկրների մեծ մասի  
 պրոլետարները միացան, հիմնելով փառապանծ «Բանվորների Մի-  
 ջազգային Ընկերութունը»: Այդ Ինտերնացիոնալը, ճիշտ ե, միայն  
 ինն տարվա կյանք ունեցավ, բայց վոր նրա ստեղծած հավիանա-  
 կան միութունը բոլոր չերկրների պրոլետարների միջև տակավին  
 ապրում ե և ավելի գորեղ ե, քան չերբե, զրա փայլուն ապա-  
 ցույցը կարող ե լինել այսօրվա որը: Վորովհետև այսօր, չերր  
 գրում եմ սույն տողերը, չեվրոպական և ամերիկյան պրոլետարիատը  
 չափում ե իր ուղղական ուժերը՝ համախմբված Մի բանակի  
 մեջ, Մի գրոշակի տակ, Մի սերձավոր նպատակի համար—Որենքով  
 սահմանելու ութժամյա աշխատանքի օր, վոր ձևակերպվել ու հայտա-  
 բարվել եր զեռ 1889 թվականին ժնեի կոնգրեսում\*): Յեղ այսօրվա

\* Այստեղ մի ինչ վոր թյուրիմացության կա: Բանվորների Միջազգային Ըն-  
 կերության ժնեի կոնգրեսը տեղի չե ունեցել 1889 թվականին, չերր իրօք ձևակերպ-  
 վել ե որենպրոթյամբ անժամկատ ութժամյա աշխատանքի օրվա պահանջը: Իսկ  
 1889 թվականին տեղի չե ունեցել Փարիզի կոնգրեսը՝ վերջին խմբերիայխոսական պա-  
 տերազմի նախորդակին խայտառակ կերպով զերեզման իջած 11-րդ Ինտերնացիոնալի  
 առաջին համագումարը, ուր վերստին հաստատվել ե այն և այնուհետև զարձեղ տարեց  
 տարի կրկնվող Մայիս 1-ի միջազգային բանվորական տանի ուղղական նշանաբա-  
 նը: Այնինչ՝ Ենգելսը խոսում ե 1889 թ. ժնեի կոնգրեսի մասին: Արջ՝ զերմանե-  
 րին բնագրում կամ աղագրական սխալ և սպրդել թվականի մեջ, կամ ել քայ և թողն-  
 ված մի պարբերության: Բայց ամայի խմբագրությամբ լույս տեսած ուսուներն թարգ-

8881  
 A

ՄԻ  
 ԳՐԱԴԱՐԱՆ  
 ԳՐԱԴԱՐԱՆ  
 ԳՐԱԴԱՐԱՆ

սեասրանը բաց կանի բոլոր չերկրների կապիտալիստների ու կալվածատերերի աչքերը՝ տեսնելու, զոր այսօր իրոք միացած են բոլոր չերկրների պրոլետարները:

Յերանխ, թե ինձ հետ լինեք Մարքսը՝ իր սեփական աչքերով տեսնելու այդ:

Լոնդոն, 1 մայիսի 1890 թ.

Ք. Եհգելս

#### IV\*)

«Կուսմունխտական Մանիֆեստի» մի նոր հրատարակության անհրաժեշտությունը տեղիք է տալիս զանազան մտորումների:

Ամենից առաջ պետք է շեշտել այն հանգամանքը, զոր վերջերս Մանիֆեստը վորոշ չափով դարձել է Յեվրոպայի խոշոր արդյունազործության զարգացման շափանիչը: Քանի զարգանում է տվյալ չերկրում խոշոր արդյունազործությունը, այնքան ավելի չե խորանում նույն չերկրի բանվորության մեջ իր՝ վորպես բանվորների դասակարգի՝ գրությունը սեփականատեր դասակարգի նկատմամբ պարզելու ձգտումը. այնքան ավելի չե աճում սոցիալիստական շարժումը բանվորության մեջ և մեծանում Մանիֆեստի պահանջը: Այդպես՝ տրվյալ ազգային լեզվով հրատարակած Մանիֆեստի տարածված քանակով կարելի չե վորոշել բավականաչափ ճշգրիտ վաղ միայն բանվորական շարժման գրությունը, այլև խոշոր արդյունազործության զարգացման աստիճանը յուրաքանչյուր չերկրում:

Այդպես էլ Մանիֆեստի լեհերեն նոր հրատարակությունը ցույց է տալիս, զոր լեհական արդյունազործությունն անընդհատ զարգանում է: Իսկ թե այդպիսի զարգացում տեղի չե ունեցել այս տաս տարվա ընթացքում՝ սկսած վերջին հրատարակության հրապարակ դալուց. — դա դուրս է վորեն կտակածից: Լեհական թագավորությունը դարձել է ուստական պետության խոշոր արդյունազործական շրջանը:

Ռուսական խոշոր արդյունազործությունը ցրված է սպորադիկ կերպով — մասամբ Ֆիննական նեղուցի մոտ, մասամբ կենտրոնական

մասնության մեջ այդ կտորը թարգմանված է այսպես. «...որենով սահմանելու ութ-մամյա աշխատանքի ուր, զորի պահանջը առաջադրված է չեղել արդեն Բանվորների Միջազգային Ընկերության ժնեի համապատասխան և ապա կրկնված՝ Փարիզի 1889 թվականի Միջազգային Բանվորական կոնգրեսում»:

Ս. Կ.

\*) Չորրորդ և հինգերորդ առաջարկները շեն մասն զերմաներեն 1922 թվականի հրատարակության մեջ, զորը չեղել է մեր ձեռքի տակ: Սույն ներածությունը ենդելը դրել է 1892 թվականի լեհերեն հրատարակության, իսկ հետեյալը՝ 1893 թվականի իտալերեն հրատարակության համար: Յերկու առաջարկներն էլ թերված են Ընդհանուր խմբագրության յույս տեսած ուսուերեն հրատարակության մեջ, զորից է թարգմանված են հայերեն:

Ս. Կ.

նահանգներում (Մոսկվա և Վլադիմիր), մասամբ էլ Սևու Ազովյան ծովափերին: Այնինչ լեհական արդյունագործությունը կենտրոնացած է համեմատաբար փոքր տարածություն վրա և ոգավում է այդպիսի կենտրոնացման ինչպես առավելություններից, նույնպես էլ բացասական կողմերից: Այդ առավելությունները քաջ ծանոթ են ուսական գործարանատերերին, վորոնք պահանջում են պաշտպանողական մաքսընդդեմ Լեհաստանի, չնայած վոր մեծ ցանկություն ունեն ուսացնել բոլոր լեհերին: Բացասական կողմերը—լեհ գործարանատերերի և ուսական կառավարության համար—արտահայտվում են լեհ բանվորության մեջ սոցիալիստական գաղափարների արագ զարգացմամբ և Մանիֆեստի պահանջի անընդհատ աճումով:

Մակայն ուսական արդյունագործությունից ավելի բարձր աստիճանի հասած լեհական արդյունագործության արագ զարգացումը իր հերթին մի նոր ապացույց է լեհ ժողովրդի անսպառ կենսական յեռանդի և նոր գրավական ապագա ազգային վերածնության: Իսկ անկախ, հզոր Լեհաստանի վերածնությունը մի գործ է, վորը կարևոր է վոչ միայն լեհերի, այլև մեզ բոլորիս համար: Յեվրոպական ժողովուրդների սերտ միջազգային աշխատակցությունը հնարավոր է միայն այն ժամանակ, յերբ այդ ժողովուրդներից յուրաքանչյուրը կլինի իր տան լիակատար տերը: 1848 թվականի հեղափոխությունը, վորը պրոլետարական դրոշակի ներքո պայքարող պրոլետարական մարտիկներին դարձրեց միայն բուրժուազիայի համար կրակից շագանակ հանողներ, միևնույն ժամանակ իր խնամակալների՝ Նապոլեոնի և Բիսմարկի ձեռքով սանձեց անկախ Իտալիա, Գերմանիա և Վենդերիա, իսկ Լեհաստանը, վորն սկսած 1791 թվականից ավելի շատ հեղափոխական գործ է կատարել, քան այդ լեհեր ժողովուրդները միասին, ասում ենք՝ այդ Լեհաստանը թողնվել է ինքն իր բախտին, յերբ 1863 թվականին հաղթահարվել է տաս անգամ ավելի ուժեղ ուսական կայսրության կողմից:

Շլայխտան չկարողացավ վոչ միայն պահել Լեհաստանը, այլ և կռվով ձեռք բերել նրա անկախությունը: Լեհ բուրժուազիայի համար Լեհաստանն որեցոր կորցնում է իր նշանակությունը: Միայն լեհիտասարդ լեհ պրոլետարիատը կարող կլինի վերականգնել այն, և միայն նրան ձեռքում ապահովված կլինի վերջինիս վիճակը: Ուստի Արևմտյան Յեվրոպայի բանվորը վոչ պակաս, քան լեհ բանվորը, շահագրգռված է Լեհաստանի ազատագրություն:

«Կոմմունիստական Կուսակցութեան Մանրֆիեստ»-ի հրատարակութիւնը զուգադիպել է, չեթե կարելի չի այդպես ասել, մարտի 18-ի որման՝ Միլանում և Բերլինում տեղի ունեցած հեղափոխութիւններին: Այդ հեղափոխութիւններն ապստամբութիւններն էլին յերկու ժողովրդի, վորնք զանվում են կենտրոնում՝ մեկը չեզոքական ցամաքում, մյուսը Միջերկրականում, յերկու ժողովրդի, վորոնք մինչև այդ բղկավում էին ներքին յերկպառակութիւններէց, և այդ պատճառով էլ ընկել էին ոտարեկերյա տիրապետութեան ներքո: Յեթե Իտալիան յենթարկված էր ավստրիական կայսրին, սպա Գերմանիան ընկնում էր վոչ պակաս իրականորեն, թեև ավելի կողմնակի կերպով, համառուսական ցարի լծի տակ: Մարտի 18-ի հեղափոխութիւնը փրկեց Իտալիան և Գերմանիան այդ խայտառակութիւններէց, և չեթե 1848 թվականից մինչև 1871 թվականը վերականգնված էին այդ չեզոքութեան մեծ ազգերը և վորոչ չափով եղան էլին ինքդիրներն», սպա զա տեղի չի ունեցել, ինչպես կարլ Մարքսն և ասել, այն պատճառով, վոր այն մարդիկ, վորոնք խեղդել էին 1848 թվականի հեղափոխութիւնը, հանդես էին յեկել՝ հակառակ իրենց կամքի՝ վորպես այդ հեղափոխութեան խնամակալները:

Այդ հեղափոխութիւնն ամենուրեք չեղել և բանվոր դասակարգի գործը. հենց նա չի բարբրկազներ սարքել և զոհարերել իր կյանքը: Միայն Փարիզի բանվորներն են, վոր տապալելով կոստովարութիւնը, ունեցել են անխախտ, վորոչ մտադրութիւն՝ տապալելու նաև վոզ՞ բուրժուական բեծիմը: Բայց թեև նրանք արդեն գիտակցում էին այն ճակատագրական հակասութիւնը, վոր գոյութիւն ուներ իրենց սեփական դասակարգի և բուրժուազիտալի միջև, այնուամենայնիվ վոչ յերկրի տնտեսական առաջդիմութիւնը, վոչ էլ Ֆրանսիական բանվորական զանգվածների մտավոր զարգացումը տակաւին չէին հասել այն աստիճանին, վոր հնարավորութիւն ընձեռեի առաջ բերելու սոցիալական հեղաշրջում: Այդ պատճառով էլ հեղափոխութեան պտուղները վերջ ի վերջո բաժին ընկան կապիտալիստների դասակարգին: Իսկ մյուս յերկրներում՝ Իտալիայում, Ավստրիայում, Գերմանիայում բանվորները հենց սկզբից միայն ոգնել են բուրժուազիտալին՝ զրավելու իշխանութիւնը: Սակայն յուրաքանչյուր յերկրում բուրժուազիտալի տիրապետութիւնը հնարավոր և ժիմիայն ազգային անկախութեան պայմաններում: Այսպիսով 1848 թվականի հեղափոխութիւնը պետք է իր հետ բերեր այն ազգերի միացումն ու անկախութիւնը, վորոնք այն ժամանակ շունչէին այդպիսիք, այսինքն՝ Իտալիայի, Գերմանիայի, Վենգրիայի: Լեհաստանը կհետեի զրանց իր ժամանակին:

Յեկ, ուրիմն, 1848 թվականի հեղափոխութիւնը չի լեղել սոցիալիստական հեղափոխութիւն, բայց նա հարթել է վերջինիս ուղին, հող պատրաստել նրա համար: Նրա հզոր ազդեցութեամբ բոլոր չերկրներում զարգացել է խոշոր արդյունազորածութիւնը, և այդ հանգամանքի շնորհիվ բուրժուական հասարակութիւնը վերջին 45 տարվա ընթացքում առաջ է բերել բազմաթիվ, սերտորեն կապված հզոր պրոլետարիատ և ստեղծել աշխարհում, Մանիֆեստի վճռով առած, իր սեփական գերեզմանափորներ: Առանց յուրաքանչյուր ազգի անկախութեան ու համախմբման՝ չեն կարող տեղի ունենալ վճշ պրոլետարիատի միջազգային համախմբումն, վճշ էլ այդ ազգերի խաղաղ և գիտակցական աշխատակցութիւնն՝ ընդհանուր նպատակների համար: Պատկերացրեք ձեզ, լեթե միայն կարող էք, իտալական, վենգրիական, գերմանական, լեհական, ռուսական բանվորների ընդհանուր միջազգային գործողութիւն այն քաղաքական պայմաններում, վորոնք իշխում էին մինչև 1848 թվականը:


Այդպիսով 1848 թվականի ճակատամարտերը զուր չեն տեղի ունեցել, ինչպես նաև զուր չեն անցել այն 45 տարիները, վորոնք բաժանում են մեզ այդ հեղափոխական ժամանակաշրջանից: Վերջինիս պրոտուղներն սկսում են հասունանալ, և իմ վողջ ցանկութիւնն է, վոր այս իտալերեն թարգմանութեան հրատարակութիւնը ծառայի վորպես իտալական պրոլետարիատի հաղթութեան լավագույն յերաշխիքը, ինչպես բնագրի հրատարակութիւնը հանգիսացավ միջազգային հեղափոխութեան չերաշխիքը:

Մանիֆեստը լիովին ճանաչում է այն հեղափոխական ծառայութիւնը, վոր ունեցել է կապիտալիզմն անցյալում: Առաջին կապիտալիստական ազգը չեղել է Իտալիան: Ավատական միջնադարի արևադարձը, ժամանակակից կապիտալիստական դարաշրջանի արշալույսը ծնել է մի հակառակ դեմք: Այդ դեմքը իտալացի չեր՝ Դանտեն, վորը մինևուչին ճամանակ թէ միջնադարի վերջին և թէ նոր ժամանակների բանաստեղծն էր: Այժմ, ինչպես և 1300 թվականին, սկսում է զբժազրվել մի նոր պատմական դարաշրջան: Կոսմ արդյոք Իտալիան մի նոր Դանտե, վոր անմահացնի այդ նոր պրոլետարական դարաշրջանի ծագման ժամը:

Ք. Մեգելս

Լոնդոն, 1 փետրվարի 1893 թ.





## ԿՈՄՄՈՒՆԻՍՏԵԿԱՆ ԿՈՒՍԵԿՅՈՒԹՅԱՆ ՄԱՆԻՓԵՍՏԸ

Մի ուրուական ե շրջում Յեվրոպայում — կոմմունիզմի ուրուականը: Այդ ուրուականի դեմ սրբազան կատաղի հայածանք մղելու համար համախմբվել են հին Յեվրոպայի բոլոր ուժերը — պապը և ցարը, Մետաերնիխը և Գրգոն, ֆրանսիական արմատականները և գերտանախոն վոստիկանները<sup>1)</sup>:

Վճր ընդդիմադիր կուսակցության չեն անվանարկել իշխող հակառակորդները՝ անվանելով կոմմունիստական: Վճր ընդդիմադիր կուսակցություն չես չի շարտել կոմմունիստական կոչումի խալտառակ պարսավանքը ոպպոզիցիայի ավելի առաջադեմ ներկայացուցիչների կամ իր հետադեմ հակառակորդների յերեսին:

Յերկու յեզրակացություն կարելի յե հանել այդ փաստից: Յեվրոպական բոլոր հզոր պետությունները կոմմունիզմի մեջ արգեն տեսնում են մի ուժ:

Ժամանակն ե արգեն, վոր կոմմունիստները վողջ աշխարհի առջև պարզ ու ակներև հայտարերեն իրենց հայացքը, իրենց նպատակները, իրենց ձգտումները, և կոմմունիզմի ուրուականի հեքիաթին հակադրեն իրենց կուսակցության Մանիֆեստը:

Այդ նպատակով զանազան ազգությունների կոմմունիստները համաբովել են Լոնդոնում և կազմել ստորև բերված Մանիֆեստը՝ անգլիերեն, ֆրանսերեն, իտալերեն, ֆլամաներեն և գանիերեն հրատարակելու համար:

## ԲՈՒՐԺՈՒԱՆԵՐԸ ՅԵՎ ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐԸ

Բոլոր մինչայժմյան հասարակութիան պատմութիւնը\*), դասակարգային կռիւիների պատմութիւնն է:

Ազատն ու ստրուկը, պատրիկն ու պլեբայը, բարոնն ու ճորտը, համբարային վարպետն ու սատարը, կարճ՝ ճնշողն ու ճնշվողը յեղել են իրար միշտ հակառակ, մղել են իրար դեմ անընդհատ կռիվ՝ մերթ գաղտնի, մերթ ակնհայտ, մի կռիվ, վորը յուրաքանչյուր անգամ վերջացել է ամբողջ հասարակութիան հեղափոխական նորակազմութեամբ, կամ թե՛ պայքարող դասակարգների ընդհանուր կործանումով:

Պատմութիան նախընթաց ժամանակաշրջաններում գրեթե ամենուրեք մենք տեսնում ենք հասարակութիան լիակատար բաժանումն զանազան դասերի, հասարակական զիրբերի բազմապիսի աստիճանների: Հին Հռոմում մենք տեսնում ենք պատրիկներ, ասպետներ, ստրուկներ, միջնադարում՝ ազատատերեր, վասսալներ, համբարային վարպետներ, սատարներ, ճորտեր, և այդ դասակարգերից գրեթե յուրաքանչյուրի մեջ՝ կըրկին առանձին ստորաբաժանումներ:

Ազատական հասարակութիան կործանումով առաջ յեկած արդի բուրժուական հասարակութիւնը չվերացրեց դասակար-

\*) Այսինքն՝ ավելի ճիշտ՝ գրավոր ավանդված պատմութիւնը: 1847 թվականին հասարակութիան նախապատմութիւնը—հասարակական այն կազմակերպութիւնը, վորը նախորդել է բոլոր գրավոր պատմութեանը—գեո գրեթե բնավ հայտնի չէր: Հետո միայն Հաքստհաուզենը հայտնագործեց հողի համայնասեփականութիւնը Ռուսաստանում, իսկ Մուլլերն ապացուցեց, վոր զա այն հասարակական հիմքն է, վորից պատմականորեն յելել են բոլոր գերման ցեղերը: Հետզհետե հայտնի դարձավ նաև այն, վոր գլուղահամայնքները հանրային հողատիրութեամբ հասարակութիան նախածեն են յիզել՝ Հնդկաստանից մինչև Իրլանդիա: Վերջապես Մորգանի դափնեպսակ գլուտը, պարզաբանելով տոճմի իսկական բնույթը և նրա տեղը ցեղի մեջ, գրեթե ընտարույս կոմունիստական հասարակութիան ներքին կազմակերպութիւնը իր տիպիկ ձևով: Այդ նախնական համայնքի կազմալուծմամբ սկսվում է հասարակութիան բաժանումը տարրեր և ապա հակադիր դասակարգերի\*):

գերի ներհակութիւնը: Եւ միայն նոր դասակարգեր, ճշուժի նոր պայմաններ, կովի նոր ձևեր դրեց հների տեղը:

Մեր ժամանակաշրջանը — բուրժուազիայի ժամանակաշրջանը — նրանով է սակայն բնութագրվում, վոր պարզորոշել է դասակարգային ներհակութիւնները: Վողջ հասարակութիւնն ալելի ու ալելի չէ բաժանվում յերկու խոշոր թշնամական բանակների, յերկու խոշոր՝ անմիջապէս իրար դեմ ծառայած դասակարգերի — բուրժուազիայի և պրոլետարիատի:

Միջնագարչան ճորտերից ծագել է առաջին քաղաքների քաղքենի բնակչութիւնը: Այդ քաղքենիութիւնից զարգացել են բուրժուազիայի առաջին սարրերը:

Ամերիկայի հայտարեբուժը, Աֆրիկայի շրջնավութիւնը նոր ասպարեզներ բաց արին ծագող բուրժուազիայի համար: Արևելյան Հնդկաստանի և Չինաստանի շուկաները, Ամերիկայի գաղութայնացուժը, փոխանակութիւնը գաղութների հետ, շրջանառութիւն միջոցների և ընդհանրապէս ապրանքների բազմացուժը մի շտեմնված զարկ տվին առևտուրին, նավագնացութիւնը, արդյունագործութիւնը և այդպիսով արագորեն զարգացրին քայքայվող ափատական հասարակութիւն հեղափոխական տարրը<sup>3)</sup>:

Արդյունագործութիւն ափատական կամ համբարային միջալժմյան յեղանակն այլևս բավարարութիւն չէր տալիս նոր շուկաների հետ միասին աճող պահանջին: Նրա տեղը բռնեց մանուֆակտուրան: Արդյունագործական միջին դասը վտարեց համբարային վարպետներին: Զանազան համբարութիւններէ միջև աշխատանքի բաժանումն անհետացավ, տեղի տալով աշխատանքի բաժանմանը յուրաքանչյուր արհեստանոցում<sup>4)</sup>:

Սակայն շուկաները միշտ ընդլայնվում էին, պահանջները շարունակ աճում: Մանուֆակտուրան ևս չէր կարողանում բավարարութիւն տալ: Ենթ աճ շոգին ու մեքենան հեղաշրջում առաջացրին արդյունագործութիւն մեջ: Մանուֆակտուրայի տեղը բռնեց արդի խոշոր արդյունագործութիւնը, արդյունագործական միջին դասի տեղը բռնեցին արդյունագործական միլիոնատերերը — արդյունագործական ահագին բանակների պետերը, արդի բուրժուաները:

Թողոր արդյունագործութիւնն ստեղծեց համաշխարհային շուկա, վորը նախապատրաստվել էր Ամերիկայի հայտարարութեամբ: Համաշխարհային շուկան մեծապես զարկ տված առևտրին, նավագնացութիւնը, ցամաքային հաղորդակցութիւնը: Իսկ իր հերթին ազգեց արդյունագործութիւն ծավալման վրա: Յեզ վորքան զարգանում էին արդյունագործութիւնը, առևտուրը, նավագնացութիւնը, յերկաթուղիները, նույնքան էլ զարգանում էր բուրժուազիան, բազմապատկւում էին նրա կապիտալները, և յետ էին մղվում միջնադարից ժառանգութիւն մնացած բոլոր դասակարգերը<sup>5)</sup>:

Այդպիսով մենք տեսնում ենք, վոր արդի բուրժուազիան ինքը արդյունք է զարգացման յերկարատե ընթացքի, արտադրութիւն և հաղորդակցութիւն միջոցների մեջ տեղի ունեցած մի շարք հեղաշրջումների:

Բուրժուազիայի այդ զարգացման յուրաքանչյուր աստիճան ունեցել է համապատասխան քաղաքական առաջադիմութիւն: Բուրժուազիան իբրև ճնշվող դաս, վորը մի ժամանակ գտնվում էր ավատականների տիրապետութիւն ներքո և կազմում գինված ու ինքնավար աստղիացիա քաղաքային կոմունալիզմ<sup>6)</sup> — մի տեղ անկախ քաղաքային հանրապետութիւն, մի ուրիշ տեղ միապետութիւն յերրորդ հարկատու դաս, ապա՝ մանուֆակտուրայի ժամանակներում՝ դասային կամ բացարձակ միապետութիւն մեջ ազնվականութիւն հակակշիռ այդ բուրժուազիան, վորն ընդհանրապես յեղել է խոշոր միապետութիւններ յիմնական պատմանդանը, արդի ներկայացուցչական պետութիւն մեջ՝ խոշոր արդյունագործութիւն և համաշխարհային շուկայի հաստատմար՝ վերջապես նվաճել է բացառիկ քաղաքական իշխանութիւն: Այժմյան պետական իշխանութիւնը լոկ մի կոմիտե յե, վոր վարում է ամբողջ բուրժուազիան դասակարգի հանրային գործերը<sup>6)</sup>:

Բուրժուազիան կատարել է պատմութիւն մեջ մի վերին աստիճանի խոշոր հեղափոխական գեր:

<sup>5)</sup> Բուսիլայի և Ֆրանսիայի քաղաքային բնակիչներն ապրելու էին անվանում իրենց քաղաքային համայնքները, յերբ նրանք հաջողում էին փոզով կամ ուժով ստիպել իրենց ավատատերերին՝ զիջելու ինքնավարութիւն առաջին իրավունքները:

Ամեն տեղ, ուր բուրժուազիան հասնում եր տիրապետութեան, հիմնահատակ եր անում բոլոր ավատական, նահապետական, իգիլլիական հարաբերութիւնները: Նա անխղճորեն կը արատում եր այն բազմապիսի ավատական կապ՝ բը, վորոնք հանգուցում ելին մարդկանց իրենց ժառանգավոր պետերի հետ, և չեր թողնում մարդկանց միջև ուրիշ վոչ մի կապ, բայց լեթիւ մերկ շահը, անգութ սկանխիկ վճարը: Նա խեղդում եր բարեպաշտ ցնորքի սրբազան լերկուղածութիւնը, ասպետական վոզևորութիւնը, քաղքենական թախծութիւնը յետմոյ հաշվի ստացաշունչ ջրի մեջ: Նա վեր եր ածում անձնական արժանապատւութիւնը փոխանակային արժեքի, և գրով լերաշխարհում ու անձամբ ձեռք բերած բազմաթիւ ազատութիւններ լեղր դնում միայն մի անխիղճ ազատութիւն — առևտրի ազատութիւնը: Մի խորքով՝ կրօնական ու քաղաքական պատրանքներով քողարկված շահագործութիւնը նա փոխարինում եր պարզ, լկտի, անմիջական չոր ու ցամաք շահագործութեամբ<sup>3</sup>):

Բուրժուազիան քողագերծ արավ յուսապսակն այն բոլոր գործունելութիւնների, վորոնց վրա մինչև այդ նայում ելին մեծարանքով ու բարեպաշտ լերկուղածութեամբ: Նա վարձկան դարձրեց բժշկին, իրավաբանին, քահանային, բանաստեղծին, գիտութեան մարդուն:

Բուրժուազիան պատուեց ընտանեկան հարաբերութիւններ ի սրտաշարժ-սենտիմենտալ քողի և վերածեց այդ հարաբերութիւնները գուտ գրտմական հաշիւ:

Բուրժուազիան դրսևորեց հեռապիտեկաններին այնքան հիացք պատճառող կոպիտ ուլժի արտահայտութիւնը, վորը իրեն համապատասխան լրացումն եր գանում ծուլ պորտարուծութեան մեջ: Առաջին անգամ հենց նա ապացուցեց, թե ինչեր կարող ե անել մարդկային գործունելութիւնը: Նա բոլորովին այլ հրաշքի գործեր ե կատարել, քան լեզիպտական բուրգերը, հոսմեական ջրմուղները և գոթական տաճարները. նա միանգամայն այլ արշավանքներ ե վարել, քան ժողովուրդները զաղթը և խաչակրաց արշավանքները:

Բուրժուազիան չի կարող գոյութիւն ունենալ առանց ա-

նընդհատ հեղափոխելու արտադրութեան գործիքները, հետևապէս արտադրական հարաբերութիւնները, հետևապէս հասարակական վոզձ հարաբերութիւնները: Արտադրութեան հին յեղանակի անփոփոխ պահպանումը, ընդհակառակը, կազմում եր բոլոր նախընթաց արդյունագործական դասակարգերի գոյութեան առաջին պայմանը: Արտադրութեան շարունակական հեղաշրջումը, հասարակական բոլոր դրութիւնների անընդհատ ցնցումները. հավիտենական անազանութիւնն ու շարժումը՝ տարբերում են բուրժուական ժամանակաշրջանը մյուս բոլոր ժամանակաշրջաններից: Բոլոր կայուն, ժանգոտած հարաբերութիւնները քայքայվում են՝ իրենց համապատասխան հնազույն գաղափարների ու հայեցողութիւնների հետ միասին, իսկ նորերը տակաւին չվտակբացած՝ հնանում, թոշում են: Բոլոր դասայինը և կանգունը գոյորշիանում ե, բոլոր սրբութիւնները պղծվում են, և մարդիկ հարկադրվում են վերջ ի վերջո զգաստ աչքով նայելու իրենց կենսական դրութեանը, իրենց փոխադարձ հարաբերութիւններին):

Յուր արդյունքների հարածուն վաճառման պահանջը վորսի լե հսուււ բուրժուազիւտին վոզձ յերկրագնդի կողմերը: Ամեն տեղ բույն ե դնում նա, ամեն տեղ բնակութիւն հաստատում, ամեն տեղ հարաբերութիւններ ստեղծում<sup>2</sup>):

Բուրժուազիան տիեզերական ե զարձրել բոլոր յերկրների արտադրութիւնն ու սպառումը՝ համաշխարհային շուկայի շահագործամար: Նա զրկել ե արդյունագործութիւնը ազգային հողից, մեծ վիշտ պատճառելով յետադիւսականներին: Վոշնշացվել և որեցոր վոշնշացվում են արդյունագործութեան հնամենի ազգային ճուղերը: Սրանց յետ են մղում արդյունագործութեան նոր ճուղերը, վորոնց մուծումը դառնում ե կյանքի խնդիր բոլոր քաղաքակրթված ազգերի համար: Արդյունագործութեան ազգային ճուղերը յետ են մղվում արդյունագործական այնպիսի ճուղերով, վորոնք մշակում են վոշ միայն տեղական, այլև հեռավոր գոտիների հում նյութերը, և վորոնց գործարանային արդյունքները միաժամանակ սպառվում են վոշ

միայն սեփական յերկրում, այլև աշխարհի բոլոր մասերում: Հին, յերկրի արդյունքներով բավարարվող կարիքները փոխարինվում են նոր կարիքներով, վորոնց բավարարումն պահանջում է ամենահեռավոր յերկրների և կլիմաների արդյունքները: Հին, տեղական և ազգային ինքնաբավարարման և կղզիացման տեղը բռնում է բազմակողմանի հաղորդակցությունը, ազգերի բազմակողմանի կախումն իրարից: Յեւ դա՛ ինչպես նյութական, այնպես և մտավոր արտադրություն նկատմամբ: Առանձին ազգերի մտավոր արգասիքները դառնում են հանրային բարիք: Ազգային միակողմանիությունն ու սահմանափակությունը դառնում են ավելի ու ավելի անհնարին, և բազմաթիվ ազգային ու տեղական գրականություններից գոյանում է համաշխարհային մեկ գրականություն<sup>10</sup>):

Բուրժուազիան դեպի քաղաքակրթությունն է մղում բոլոր ազգերին, անգամ ամենաբարբարոս ժողովուրդներին, արագորեն կատարելագործելով արտադրության բոլոր գործիքները, անսահմանորեն դուրացնելով հաղորդակցությունը: Ապրանքների եժան գները նրա ձեռքին հանդիսանում են ծանր հրետանի, վորով նա խորտակում է բոլոր շինական պարիսպները և ստիպում բարբարոսներին՝ մեկդի թողնել ամենահամառ օտարատեցությունը: Նա ստիպում է բոլոր ազգերին յուրացնել բուրժուական արտադրանքը, յեթե՛ նա ուզում իսպառ կործանվել: Նա ստիպում է նրանց յուրացնել այսպես կոչված քաղաքակրթությունը, այսինքն՝ բուրժուա դառնալ: Մի խոսքով՝ նա ստեղծում է մի նոր աշխարհ ըստ իր սեփական պատկերի<sup>11</sup>):

Բուրժուազիան գլուղը լենթարկել է քաղաքի ազդեցությունը: Նա կյանքի յե կոչել հսկայական քաղաքներ, գերազանցորեն բազմացրել քաղաքային բնակչությունը գլուղականի նկատմամբ և այդպիսով պոկել բնակչության նշանակալից մասը գլուղական կյանքի ապուշությունից: Ինչպես վոր նա գլուղը լենթարկել է քաղաքին, այնպես էլ կախման վիճակի մեջ է դրել բարբարոս և կիսաբարբարոս յերկրները քաղաքակիրթ յերկրներից, գլուղացիական ժողովուրդները բուրժուական ժողովուրդներից, Արևելքը Արևմուտքից<sup>12</sup>):



Բուրժուազիան ավելի ու ավելի լե վերացնում արտադրական միջոցների, ունեցվածքի և բնակչութան անջատվածութիւնը: Նա համախմբել է բնակչութիւնը, կենտրոնացրել արտադրութեան միջոցները և կոնցենտրացիայի յենթարկել սեփականութիւնը սակավաթիվ ձեռքերում: Դրա անհրաժեշտ հետեւանքն էր բաղաբաղան կենտրոնացումը: Անկախ, գրեթե լոկալիզացիոն գաղափարներն իրենց տարբեր շահերով, որենքներով, կառավարութիւններով ու մարտերով իրար միացան և կազմեցին մեկ ազգ, մեկ կառավարութիւն, մեկ որենք, մեկ ազգային գասակարգային շահ, մեկ մաքսային գիծ<sup>13</sup>):

Բուրժուազիան իր գասակարգային հազիվ հարյուրամյա տիրապետութեան ընթացքում ստեղծել է ավելի շատ և վիթխարի արտադրական ուժեր, քան բոլոր նախընթաց սերունդները միասին: Բնական ուժերի նվաճումը, մեքենաները, քիմիայի կիրառումը արդյունագործութեան և յերկրագործութեան մեջ, շոգենավագնացութիւնը, յերկաթուղիները, էլեքտրական հեռագրները, ամբողջ յերկրամասերի հերկելիացումը, գետերի նավարկացումը, գետնի տակից կարծես բաժ ահագին բնակչութիւններ...: Նախընթաց վեր դարում կարելի չէր կռահել, թե հասարակական աշխատանքի ծոցում այդպիսի արտադրական ուժեր կան նիրհած<sup>14</sup>):

Այսպես ուրեմն մենք տեսանք, վոր արտադրութեան և հաղորդակցութեան այն միջոցները, վորոնց հիման վրա առաջ է յեկել բուրժուազիան, ծնունդ են առել ավատական հասարակութեան մեջ: Արտադրութեան և հաղորդակցութեան այդ միջոցների զարգացման վորոշ աստիճանում՝ ավատական հասարակութեան արտադրական և փոխանակային հարաբերութիւնները, ագրիկուլտուրայի և մանուֆակտուրայի ավատական կազմակերպութիւնը, կարճ՝ սեփականութեան ավատական հարաբերութիւններն այլևս չեցին համապատասխանում արդեն զարգացած արտադրողական ուժերին: Նրանք՝ նպաստելու փոխարեն՝ կաշկանդում էին արտադրութիւնը: Նրանք դարձան նուրբան մեծաթիվ կապանքներ: Նրանք պետք է խորտակվեցին, և իրապես խորտակվեցին:

Նրանց տեղը բնեց ազատ մրցութիւնը՝ հասարակական

ու քաղաքական համապատասխան սահմանադրութեամբ, բուրժուա դասակարգի տնտեսական ու քաղաքական տիրապետութեամբ:

Մեր աչքի առջև տեղի չե ունենում նման մի շարժում: Արտադրութեան և հաղորդակցութեան բուրժուական հարաբերութիւնները, սեփականութեան բուրժուական հարաբերութիւնները, արդի բուրժուական հասարակութիւնը, վոր կարծես կախարդորեն կյանքի չե զոչել արտադրութեան և հաղորդակցութեան այնքան վիթխարի միջոցներ, նման ե ահա մոգպետին, վորն ալիս չի կարողանում տիրապետել իր իսկ դուրս կոչած ստորերկրյա ուժերին: Տամնյակ տարիներէից ի վեր արդյունագործութեան և առևտրի պատմութիւնը ժամանակակից արտադրական ուժերի ցասման պատմութիւնն է՝ ընդդէմ արդի արտադրական հարաբերութիւններին, ընդդէմ սեփականային հարաբերութիւններին, վոր կազմում են բուրժուազիայի գոյութեան և նրա տիրապետութեան պայմանները: Բավական ե հիշել առևտրական ճգնաժամերը, վոր պարբերաբար կրկնվելով՝ ավելի ու ավելի սպառնալից են դարձնում վողջ բուրժուական հասարակութեան գոյութեան խնդիրը: Առևտրական ճգնաժամերի ընթացքում վոչնչացման ե լենթարկվում վոչ միայն արտադրած արդյունքների, այլև արդեն գոյութիւն ունեցող արտադրողական ուժերի խոշոր մասը: Ճգնաժամերի միջոցին քանկվում ե հասարակական մի համաճարակ — գերարտադրութեան համաճարակը, վորը նախընթաց բոլոր ժամանակաշրջաններում աննեթեթութիւն կթվար: Հասարակութիւնը կարծես հանկարծ յետ ե մղվում դեպի բարբարոսական դրութիւնը: Կարծես համատարած սոփն ու ավերիչ պատերազմը կյանած լինեն նրա գոյութեան բոլոր միջոցները. կարծես արդյունագործութիւնն ու առևտուրը վոչնչացած լինեն, և ինչո՞ւ: Վորովհետև հասարակութիւնն ավելի քան քաղաքակիրթ ե, վորովհետև նա ունի ավելի շատ ապրուստի միջոցներ, տեր ե ավելի զարգացած արդյունագործութեան, ավելի ընդարձակ առևտրի: Արտադրողական այն ուժերը, վորոնք գտնվում են նրա արամադրութեան տակ, այլ ևս չեն նպաստում բուրժուական

սեփականային հարաբերութիւնների զարգացմանը: Ընդհակառակը, այդ ուժերն ավելի յեն զարգացել հիշյալ հարաբերութիւնների նկատուամբ. նրանց զարգացումը խոչընդոտների յե հանդիպում այդ հարաբերութիւնների շնորհիվ: Յեւ յերբ նրանք հաջողում են հաղթահարել այդ արգելքները, ապա խառնաշփոթութեան մեջ են ձգոււմ վողջ բուրժուական հասարակութիւնը, սպառնում բուրժուական սեփականութեան գոյութեանը: Բուրժուական հարաբերութիւններն այնքան են նեղ թվում, վոր այլևս անկարող են ընդգրկել իրենց իսկ ստեղծած հարստութիւնը: — Ինչպես ե վերացնում բուրժուազիան ճգնաժամերը: Մի կողմից՝ նա առհարկի վոչնչացնում ե արտադրողական ուժերի մի խոշոր մասը, իսկ մյուս կողմից՝ նըվաճում նոր շուկաներ և ավելի հիմնավորապես շահագործում հին շուկաները: Ինչպես ուրեմն. պատրաստելով ավելի մեծ ու աճելի ճգնաժամեր և պակասեցնելով զբանցից խուսափելու միջոցները <sup>15</sup>):

Այն գեները, վորով բուրժուազիան զգեանել ե ավատականութիւնը, այժմ ուղղված ե հենց իրեն՝ բուրժուազիայի դեմ:

Սակայն բուրժուազիան կուել ե վոչ միայն իր համար մահաոթ զենք, այլ և ստեղծել այն մարդկանց, վորոնք պիտի գործադրեն այդ գեները—ժամանակակից բանվորներին, պրոլետարներին:

Այն չափով, ինչ չափով զարգանում ե բուրժուազիան, այսինքն կապիտալը, նույն չափով ել զարգանում ե պրոլետարիատը, ժամանակակից բանվորների դասակարգը, այն բանվորների, վորոնք իրենց գոյութիւնը պահպանում են նրանով: Վոր աշխատում են, իսկ աշխատանք են գտնում այն ժամանակ, յերբ այդ աշխատանքը բազմապատակում ե կապիտալը: Այդ բանվորները, վորոնք ստիպված են ծախվել մաս առ մաս, նույն ապրանքն են կազմում, ինչպես առևտրի ամեն մի առանձին առարկա, ուստի և հալատարապես լինթարկված են մրցման բոլոր պատահականութիւններին, շուկայի բոլոր տատանումներին <sup>16</sup>):

Մեքենաների տարածման և աշխատանքի բաժանման պատճառով պրոլետարների աշխատանքը բոլորովին կորցրել է իր ինքնուրույն բնույթը և դրա հետ միասին ամեն մի հրապույր<sup>17</sup>): Բանվորը դարձել է մեքենայի սոսկ մասնիկը, վորից պահանջում են լոկ միայն ամենահասարակ, միորինակ, հեշտությամբ յուրացվող շարժումներ: Այդ պատճառով էլ բանվորի հետ կապված ծախքերը սահմանափակվում են գրեթե միմիայն գոյության միջոցներով, վորոնք անհրաժեշտ են նրա կյանքի ու ցեղի շարունակության համար: Իսկ ամեն մի ապրանքի, նեռևապես և աշխատանքի, գինը հավասար է նրա արտադրության ծախքերին: Ուստի վորքան ավելի չե կորցնում աշխատանքն իր հրապույրը, այնքան ավելի լել բնկնում է նրա վարձը: Դեռ ավելին. այն չափով, ինչ չափով աճում է մեքենայի գործադրությունը և աշխատանքի բաժանումը, նույն չափով էլ աճում է աշխատանքի ծանրությունը: Դա տեղի չե ունենում կամ աշխատանքի ժամերի հավելմամբ, կամ տրվյալ ժամանակի համար պահանջվող աշխատանքի լարվածությամբ՝ շնորհիվ մեքենաների շարժումների արագացման և այլն<sup>18</sup>):

Ժամանակակից արդյունագործությունը նահապետական վարպետի փոքրիկ արհեստանոցը դարձրել է արդյունագործական կապիտալիստի խոշոր գործարան: Այստեղ հավաքված բանվորական զանգվածները կազմակերպվում են զինվորների պես: Իբրև հասարակ արդյունագործական զինվորներ՝ նրանք լենթարկվում են լենթասպանների ու սպանների մի ամբողջ հիյերարխիայի: Նրանք վնչ միայն բուրժուա դասակարգի, բուրժուական պետության ստրուկներն են, այլ և ամեն որ, ամեն ժամ ստրկանում են մեքենային, վերակացուին և ամենից առաջ հենց գործարանատեր բուրժուային: Այդ բռնակալությունն այնքան ավելի մանր է, զգվելի, կսկծեցուցիչ, վորքան նա պարզորոշ է հռչակում շահը՝ վորպես նպատակ<sup>19</sup>):

Վորքան ձեռնաշխատանքը քիչ է պահանջում ճկունություն և ուշժ, այսինքն վորքան ավելի լել զարգանում ժամանակակից արդյունագործությունը, այնքան ավելի լել կանանց

ու յերեխաների աշխատանքը վտարում տղամարդկանց աշխատանքը: Սեռի ու հասակի տարբերութիւնն ալ ևս կորցնում է իր հասարակական նշանակութիւնը բանվոր գասակարգի համար: Գոյութիւն ունեն միայն աշխատանքի գործիքներ, վորոնք կապված են տարբեր ծախքերի հետ՝ նայած գործադրողի հասակին ու սեռին <sup>20</sup>):

Յերբ գործարանատերը լավ ծծում է բանվորին և սրա աշխատավարձը վճարում կանխիկ, ապա վերջինս վրա լին թափվում բուրժուազիայի մյուս մասերը՝ տնատերը, խանութպանը, վաշխատուն և այլն <sup>21</sup>):

Մինչայժմյան միջին դասի վարին խափերը՝ մանր արդյունագործները, առևտրականներն ու հասարուները, արհեստավորներն ու գյուղացիները, բոլոր այս գասակարգերը հետզհետե պրոլետարանում են մասամբ այն պատճառով, վոր նրանց ունեցած մանր կապիտալը չի բավականանում խոշոր արդյունագործական արտադրութիւն համար, և նրանք ընկճվում են խոշոր կապիտալիստների մրցումից, մասամբ ել այն պատճառով, վոր նրանց հնարագիտութիւնը կորցնում է իր նշանակութիւնը արտադրութիւն նոր ձևերի մեջ: Այդպիսով պրոլետարիատն ստվարանում է ընակչութիւն բոլոր գասակարգերի հաշիւին <sup>22</sup>):

Պրոլետարիատն անցնում է զարգացման գանազան աստիճաններ: Նրա պայքարը բուրժուազիայի դեմ սկսվում է հենց իր գոյութիւնով:

Սկզբում բանվորները կռվում են ջուղ-ջուղ, ապա մի գործարանի բանվորները միասին, հետո միևնույն տեղի արդյունագործութիւն միևնույն ճյուղի բանվորներն ընդգեմ անհատ բուրժուայի, վորը շահագործում է նրանց անմիջապես: Նրանք իրենց հարվածներն ուղղում են վոնչ միայն արտադրութիւն բուրժուական հարաբերութիւնների, ալ և հենց արտադրութիւն միջոցների դեմ. նրանք վոնչնչացնում են ոտարերկրյա մրցող ապրանքները, ջարդում մեքենաները, հրդեհում գործարանները և փորձում կրկին վերականգնել միջնադարյան բանվորների խորտակված գրութիւնը <sup>23</sup>):

Չարգացման այդ աստիճանում բանվորները կազմում են վողջ լերկրում ցրված ու մրցման միջոցով իրարից անջատված մի զանգված: Բանվորների մասսայական գործակցութունը հետևանք է վոչ թե իրենց ուրույն միության, այլ բուրժուազիայի միության. բուրժուազիայի, վորը իր ուրույն քաղաքական նպատակներին հասնելու համար՝ պետք է և առժամապես զեռ կարողանում է շարժման մեջ դնել վողջ պրոլետարիատը: Այդ աստիճանի վրա բանվորները պայքարում են, ուրեմն, վոչ թե անմիջապես իրենց թշնամիների դեմ, այլ իրենց թշնամիների թշնամիների դեմ — բացարձակ միապետության մընացորդների, կալվածատերերի, վոչ արդյունագործական բուրժուազիայի, մանր քաղբենիների դեմ: Վողջ պատմական շարժումն, այդպիսով, կենտրոնանում է բուրժուազիայի ձեռքը: Այդ լեզանակով տարած յուրաքանչյուր հաղթանակ համարվում է բուրժուազիայի հաղթանակը <sup>24</sup>):

Սակայն արդյունագործության զարգացման հետ միասին վոչ միայն բազմանում է պրոլետարիատը քանակով, այլև նրա համախմբումներն ընդունում են խոշոր զանգվածների լինութիւն, աճում է նրա ուժը և հետզհետե զարգանում գիտակցությունը: Բանվորների շահերն ու զրությունն ավելի ու ավելի լեն հավասարվում, վորովհետև մեքենան ավելի ու ավելի լե ջնջում աշխատանքի տարբերությունները և գրեթե ամենուրեք աշխատավարձը հավասարապես իջեցնում ցած մակարդակի: Բուրժուանների աճող մրցումն իրար դեմ և զրանից բրդխող առևտրական ճգնաժամերը բանվորների աշխատավարձը սնում են մշտական տատանումների մեջ: Մեքենաների մշտապես արագ զարգացումն, անընդհատ կատարելագործումն ավելի ու ավելի լե անապահով դարձնում նրանց կյանքը: Առանձին բանվորների ու առանձին բուրժուանների միջև տեղի ունեցող ընդհարումներն ավելի ու ավելի լեն ստանում լերկու դասակարգի ընդհարման բնութիւն: Բանվորներն սկսում են կռախիցիաներ կազմել՝ բուրժուանների դեմ միասին կովելու համար. նրանք միասնականորեն են ձգտում հաստատուն պահել իրենց աշխատավարձը: Նրանք հիմնում են մինչև անգամ տե-

վական աստղիացիաներ՝ ննարավոր խորտուճներէ միջոցին նյութական ոժանդակութիւն ստանալու համար: Տեղ-տեղ այդ կոխիք վերածվում է ապստամբութեան <sup>25</sup>):

Յերբեմն բանվորները հաղթող են հանդիսանում, բայց միայն խիստ կարճատև: Նրանց կռիւ եական հետեանքը վնջ թէ անմիջական հաջողութիւնն է, այլ գերազանցապես ծավալվող միացումը: Դրան նպաստում են խոշոր արդյունագործութեան շնորհիվ ստեղծված հազորդակցութեան միջոցները, վորոնք գանազան տեղերի բանվորներին կապակցութեան մեջ են դրնում իրար հետ: Յեւ հարկավոր է միայն այդպիսի կապակցութիւն, վորպէսզի բոլոր տեղերի միևնույն բնույթը կրող պայքարները կենտրոնանան ու դառնան ազգային դասակարգային կոխիք: Սակայն ամեն մի դասակարգային կոխիք քաղաքական կոխիք է: Յեւ միացումը, վորի համար միջնադարյան քաղաքացիներէց՝ սալուղներէ տիրապետութեան ժամանակ պահանջվում էին դարեր, այսօր արդի բանվորները յերկաթուղիներէ շնորհիվ այդ իրականացնում են կարճ տարիների ընթացքում <sup>26</sup>):

Բանվորների այդ կազմակերպումն վորպէս ուրույն դասակարգ, և դրա հետ միասին վորպէս քաղաքական կուսակցութիւն, յուրաքանչյուր ակնթարթ կրկին ճեղք է տալիս բանվորների միջև տեղի ունեցող մրցման շնորհիվ: Բայց այն նորից է վերականգնվում, միշտ ավելի ամուշ, միշտ ավելի ուժեղ, ավելի հզոր: Որենքի ձևով այն ընդունել է տալիս բանվորների այս կամ այն շահը, ոգտվելով բուրժուազիայի ներքին պառակտումներէց: Այդպէս եր տասթամյա բիլլը Անգլիայում:

Ընդհանրապէս հին հասարակութեան ներքին բաղխումները միշտ այս կամ այն կերպ նպաստում են պրոլետարիատի զարգացման ընթացքին: Բուրժուազիան գտնվում է տեական պայքարի մեջ: Սկզբում նա կռվում է ազնվականութեան դեմ, ապա իր դասակարգի այն մասի, վորի շահերը հակասում են խոշոր արդյունագործութեան առաջադիմութեանը, և մշտապէս վողջ ոտարերկրյա բուրժուազիայի դեմ: Այդ բոլոր պայքար-

ների միջոցին նա հարկազրկած է լինում գիմել պրոլետարիատին, հայեւի նրա սգնութիւնը և զոհանով նրան մասնակից անել քաղաքական շարժմանը: Այդպիսով նա ինքն է հաղորդում պրոլետարիատին իր սեփական կրթութեան տարրերը, այսինքն ընձեռում իր դեմ կռիւնու զինքը:

Բացի այդ՝ արդունագործութեան առաջընթացութիւնը, ինչպես մենք տեսանք, իշխող դասակարգերի քաղկացուցիչ տարրերին նետում է պրոլետարիատի շարքը կամ առնվազն դնում նրա կյանքի պայմանների մեջ: Այդ ևս պրոլետարիատին պատվաստում է կրթութեան մեծաքանակ տարրեր:

Վերջապես չերբ դասակարգային կռիւլը հասնում է իր վրձնական ժամին, իշխող դասակարգի շարքերում, ամբողջ հին հասարակութեան մեջ, քայքայման պրոցեսսն աշնպիսի ուժեղ և սուր բնույթ է ստանում, վոր իշխող դասակարգի մի փոքրիկ ժամն անջատվում է նրանից ու միանում հեղափոխական դասակարգին, այն դասակարգին, վորը իր մեջ կրում է ապագան: Ինչպես առաջ ազնվականութեան մի մասն անցել էր բուրժուազիայի կողմը, այնպես էլ այժմ պրոլետարիատի կողմն է անցնում բուրժուազիայի մի մասը, նամանավանդ բուրժուազադափարախոսների, վորոնք կարողացել են հասնել հասարակական զարգացման տեսական ըմբռնումին <sup>27</sup>):

Այն բոլոր դասակարգերից, վորոնք այսօր կանգնած են բուրժուազիայի դեմ, միայն պրոլետարիատն է իրոք հեղափոխական դասակարգ: Մնացյալ դասակարգերը քայքայվում և կործանվում են խոշոր արդունագործութեան զարգացմամբ, իսկ պրոլետարիատը այդ զարգացման հատուկ արգասիքն է:

Միջին խավերը՝ մանր արդունագործները, մանր առևտրականները, արհեստավորները, գյուղացիները, սրանք բոլորն էլ պայքարում են բուրժուազիայի դեմ՝ իրենց, վորպես միջին խավերի, գոչութիւնն ապահովելու համար: Նրանք հետեւաբար հեղափոխական չեն, սլլ պահպանողական: Դեռ ավելին՝ նրանք չետադիմական են, վորովհետև ձգտում են չետ զարձանել պատմութեան անիւլը: Յեթե նրանք հեղափոխականորեն են տրամադրվում, ապա այդ այն պատճառով, վոր նրանց սպառ-



նում ե պրոլետարիատի շարքն անցնելու վտանգը, այն պատճառով, վոր նրանք պաշտպանում են վոչ թե իրենց ներկա, այլ ապագա շահերը, վոր նրանք թողնում են իրենց տեսակետը՝ պրոլետարիատի տեսակետի վրա կանգնելու համար։

Լուսպեն-պրոլետարիատը, հին հասարակության ամենաստորին խավերի այդ կրավորական նեխվածքը, տեղ-տեղ գրքավում ե պրոլետարական հեղափոխությամբ և մասնակցում շարժմանը, թեև իր ամբողջ կացությամբ ավելի շուտ արամադիր կլինեի ծախվելու հետադիմական մեքենայություններին <sup>28</sup>) :

Հին հասարակության կյանքի պայմաններն արդեն վերացված են պրոլետարիատի կյանքի պայմաններով։ Պրոլետարիատը սեփականագուրկ ե. նրա վերաբերմունքը դեպի կլինու ու չերեխաները վոչնչով չի նմանվում բուրժուական ընտանեկան հարաբերություններին։ Ժամանակակից արդյունագործական աշխատանքը, կապիտալի արդի լուծը, վոր նույնն ե ինչպես Անգլիայում, այնպես ել Ֆրանսիայում, ինչպես Ամերիկայում, այնպես ել Գերմանիայում, սրբել-վերացրել են պրոլետարիատից ազգային բոլոր գծերը։ Նրա համար որենքները, բարոյականությունը, կրոնը վոչ այլ ինչ են, բայց յեթե բուրժուական բազմաթիվ նախապաշարումներ, վոր քողարկում են բուրժուական նույնպես բազմաթիվ շահերը <sup>29</sup>) :

Բոլոր նախկին դասակարգերը, նվաճելով իշխանությունը, ջանում ելին ազանովել իրենց գրաված դիրքերը, դնելով վողջ հասարակությունն այնպիսի պայմանների մեջ, վորոնք գերազանցորեն նպաստում ելին նրանց ոգտաշահությանը։ Պրոլետարները կարող են նվաճել հասարակական արտադրողական ուժերը, վերացնելով իրենց, հետևապես և վողջ մինչայժմյան սեփականացման լեղանակը։ Պրոլետարները վոչինչ չունեն ամրապնդելու, նրանք, ընդհակառակը, պիտի քանդեն բոլոր մինչայժմյան մասնավոր հարստացումներն ու մասնավոր ապահովացումները։

Բոլոր մինչայժմյան շարժումները լեղել են փոքրամասնությունների շարժումներ կամ տեղի լեն ունեցել հզուտ փոք-

բամամանութիւնների շահերի: Պրոլետարական շարժումը ահագին մեծամասնութիւն ինքնուրույն շարժումն է՝ հոգուտ այդ մեծամասնութիւն: Պրոլետարիատը՝ այժմյան հասարակութիւնն ամենավարին խալը՝ չի կարող բարձրանալ, չի կարող շտկվել՝ առանց հոգս ցնդեցնելու այն խալերի վողջ վերնահարկը, վորոնք կազմում են պաշտօնական հասարակութիւնը:

Պրոլետարիատի կռիւլը բուրժուազիայի դեմ ամենից առաջ ազգային է, թեև վնչ ըստ բովանդակութիւնն, այլ ըստ ձևի: Ամեն մի յերկրի պրոլետարիատ պետք է իր հաշիւը մաքրի, բնականաբար, նախ և առաջ յուր սեփական բուրժուազիայի հետ:

Այդպես՝ գծագրելով պրոլետարիատի զարգացման ամենաբնորոշանուր փուլերը, մենք հետամուտ յեղանք արդի հասարակութիւնն ծոցում տեղի ունեցող առավել կամ նվազ շափով բողբոջված քաղաքացիական կռիւն մինչև այն կետը, յերբ բռնկում է բացահայտ հեղափոխութիւն, և պրոլետարիատը, բռնութիւնով տասպալելով բուրժուազիային, հաստատում է յուր իշխանութիւնը <sup>30</sup>):

Հասարակութիւնն բոլոր մինչայժմյան կարգերը հիմնված են յեղել, ինչպես տեսանք, ճնշող ու ճնշվող դասակարգերի հակադրութիւն վրա: Սակայն մի դասակարգ ճնշել կարողանալու համար պետք է լինեն այնպիսի պայմաններ, վորոնց մեջ այդ դասակարգը կարենա պահել առնվազն իր ստրկական գոյութիւնը: Ընդհանրական բռնութիւնն տակ ճորտը հասավ կոմունայի անդամութիւնն, ճիշտ այնպես, ինչպես ավատական արսոյութիւնը մի լծի տակ քաղքենին դարձավ բուրժուա: Այնինչ ժամանակակից բանվորը արդյունազորութիւնն զարգացմանը զուգընթաց բարձրանալու փոխարեն՝ ավելի ու ավելի յե վար իջնում այն պայմաններից, վորոնց մեջ ապրում է իր դասակարգը: Բանվորն աղքատանում է, և աղքատութիւնը զարգանում է ավելի արագորեն, քան բնակչութիւնն ու հարստութիւնը: Իրանից պարզ հետևում է, վոր բուրժուազիան անկարող է տակավին յերկար մնալ, վորպես իշխող դասակարգ և իր դասակարգի կյանքի պայմանները ճանաչել տալ, վորպես հասարակութիւնն ղեկավար որենքներ: Նա անկարող է տիրա-

պետել, վորովհետև անկարող է իր ստրուկներէ ստրկական գոյութիւնն անգամ ապահովել, քանի վոր նա հարկադրված է նրանց ձգելու այնպիսի գրութիւն մեջ, վորում նա ինքը պետք է նրանց կերակրի՝ փոխանակ նրանց միջոցով ինքը կերակրվելու: Հասարակութիւնը չի կարող այլևս ապրել նրա տիրապետութիւն ներքո, այսինքն՝ նրա կյանքն այլևս անտանելի չէ հասարակութիւն համար:

Բուրժուա դասակարգի գոյութիւնն ու տիրապետութիւնն եական պայմանը կազմում է հարստութիւն կուտակումն մասնավոր ձեռքերում, կապիտալի գոյացումն ու բազմացումը: Կապիտալի գոյութիւնն պայմանը վարձու աշխատանքն է, վարձու աշխատանքը հիմնվում է բացառապես բանվորների փոխադարձ մրցման վրա: Արդյունագործութիւնն առաջադիմութիւնը, վորի կամագուրկը և պատիվը դեմքը բուրժուազիան է, բանվորների մրցման հետեանքով առաջացած կղզիացման փոխարեն՝ ընկերակցութիւնների միջոցով առաջ է բերում բանվորների հեղափոխական համախմբումն: Այդպիսով խոշոր արդյունագործութիւնն զարգացման հետ միասին բուրժուազիայի վտարի տակից խլվում է այն հիմքը, վորին հենված՝ նա արտադրում է և յուրացնում արդյունքները: Նա արտադրում է ամենից առաջ իր սեփական գեղեցման արտոնքներն: Նրա անկումըն ու պրոյետարիատի հաղթանակը հավասարապես անխուսափելի լին <sup>31</sup>):

## ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐԸ ՅԵՎ ԿՈՄՍՈՒՆԻՍՏՆԵՐԸ

Ի՞նչ հարաբերութիւն մեջ են կոմմունիստները պրոլետարների հետ ընդհանրապես:

Կոմմունիստները չեն կազմում առանձին կուսակցութիւն բանվորական այլ կուսակցութիւնների հանդեպ:

Նրանք չունեն վորեւէ շահ, վոր անջատ լինի վողջ պրոլետարիատի շահերից:

Նրանք չեն առաջադրում առանձին սկզբունքներ, վորոնց համեմատ կամենային ձևավորել բանվորական շարժումը:

Կոմմունիստները պրոլետարական մյուս կուսակցութիւններից տարբերվում են մի կողմից նրանով, վոր ազգային սահմաններում տեղի ունեցող պրոլետարական զանազան պայքարներից նրանք առաջ են քաշում և արժեք տալիս այն շահերին, վորոնք անկախ են ազգութիւնից և ընդհանուր են վողջ պրոլետարիատի համար, իսկ մյուս կողմից նրանով, վոր պրոլետարիատի և բուրժուազիայի միջև տեղի ունեցող կովի գարգացման զանազան աստիճաններում նրանք միշտ պաշտպանում են ամբողջական շարժման շահը:

Հետևապես կոմմունիստները գործնականում բոլոր լերկրների բանվոր կան կուսակցութիւնների ամենավճռական, միշտ առաջ մղող ժաման են, իսկ տեսականում՝ պրոլետարիատի մնացյալ զանգվածի հանդեպ նրանց առավելութիւնն այն է, վոր գիտեն պրոլետարական շարժման պայմանները, ընթացքը և ընդհանուր հետևանքները:

Կոմմունիստների մերձավոր նպատակը նույնն է, ինչ վոր բոլոր մյուս պրոլետարական կուսակցութիւնների նպատակը, այսինքն՝ պրոլետարիատի գասակարգային կազմակերպումը,

բուրժուազիայի տիրապետութեան տապալումը, քաղաքական իշխանութեան նվաճումը պրոլետարիատի միջոցով ։)։

Կոմմունիստների տեսական նախադրյալները բնավ չեն հիմնարկում այն գաղափարների, սկզբունքների վրա, վոր հնարել կամ հայտարարել է այս կամ այն աշխարհ-բարելավողը։

Այդ նախադրյալները գոյութուն ունեցող դասակարգային կռիւ իրական հարաբերութիւնների, մեր աչքի առջև կատար-վող պատմական շարժման լոկ ընդհանուր արտահայտութիւն-ներն են։ Սեփականային հարաբերութիւնների մինչալժամանակների վերացումը չէ բնավ, վոր կազմում է բացառապէս կոմ-մունիզմի հատկանիշը։

Բոլոր սեփականային հարաբերութիւնները միշտ լենթա-կա չեն յեղել պատմական փոփոխութեան, միշտ չենթակա չեն յեղել պատմական ձեւափոխումների։

Ձրանսիական հեղափոխութիւնը, որինակի համար, վերաց-րել է սեփականութեան ամատական ձեր և հաստատել բուր-ժուականը։

Կոմմունիզմի բացառիկ հատկանիշը վոչ թէ ընդհանրապէս սեփականութեան վերացումն է, այլ բուրժուական սեփականու-թեան վերացումը։

Սակայն արդի բուրժուական մասնավոր սեփականութիւ-նը վերջին ու լիակատար արտահայտութիւնն է արդիւնքի արտադրութեան և յուրացման այն ձեի, վորը պայմանավոր-ված է դասակարգային հակասութեամբ, մեկի շահագործմամբ մյուսով։

Այդ իմաստով կոմմունիստները կարող են իրենց տեսու-թիւնն ամփոփել մի արտահայտութեամբ — մասնավոր սեփակա-նութեան վերացումը։

Մեզ՝ կոմմունիստներին կշտամբում են, վոր իբր թէ մենք ուզում ենք վերացնել անձամբ վաստակած, սեփական աշխա-տանքով ձեռք բերած սեփականութիւնը, այն սեփականութիւնը, վորը կազմում է անձնական ազատութեան, գործունեութեան և ինքնուրույնութեան հիմքը։

Յուր աշխատանքով ձեռք բերած, վաստակած, անձամբ

շահած սեփականութիւնն: Ի՞նչ սեփականութեան մասին եք խոսում, մանր բուրժուական, մանր գյուղացիական սեփականութեան, վոր նախորդել է բուրժուական սեփականութեանը: Մենք պետք չունենք վերացնելու այդ սեփականութիւնը, քանի վոր արդյունադործութեան զարգացումը վերացրել է այն և վերացնում է որեցոր <sup>33)</sup>:

Թե՛ խոսում եք արդի բուրժուական մասնավոր սեփականութեան մասին:

Բայց մի՞թե վարձու աշխատանքը, բանվորի աշխատանքը, ստեղծում է բանվորի համար սեփականութիւնն: Վոչ յերբեք: Նրա աշխատանքը ստեղծում է կապիտալ, այսինքն այնպիսի սեփականութիւն, վորը շահագործում է վարձու աշխատանքը, վորը կարողանում է աճել այն դեպքում, յիրր ստեղծում է նոր վարձու աշխատանք՝ սրան նորից շահագործելու համար: Սեփականութեան արդի ձևը հիմնված է կապիտալի և վարձու աշխատանքի հակասութեան վրա: Քննենք այդ հակասութեան յերկու կողան ել:

Կինել կապիտալիստ՝ նշանակում է արտադրութեան պրոցեսում գրավել վոչ միայն զուտ անհատական, այլև հասարակական դիրք: Կապիտալը հանրային աշխատանքի արդյունք է և կարող է շարժման մեջ գրավել միմիայն հասարակութեան բազմաթիվ, այն, վերջին հաշվով, բոլոր անդամների միայն ընդհանուր գործունեութեամբ:

Կապիտալը, հետևապես, վոչ թե անձնական, այլ հասարակական ույժ է:

Յեթե, ուրեմն, կապիտալը դառնա հանրային, հասարակութեան բոլոր անդամներին պատկանող սեփականութիւն, ապա դա չի նշանակում, թե անձնական սեփականութիւնը վերածվել է հասարակականի: Միայն փոխվում է սեփականութեան հասարակական բնույթը: Նա կորցնում է իր դասակարգային բնույթը <sup>34)</sup>:

Անցնենք վարձու աշխատանքին:

Վարձու աշխատանքի միջին գինը աշխատավարձի նվազագույնն է, այսինքն կենսական միջոցներէ այն զուտաբը, վորն-

անհրաժեշտ է բանվորին՝ իբրև բանվորի՝ իբր գոյությունը պահպանելու համար: Ուրեմն այն, ինչ վարձու բանվորն ստանում է իբր գործունեություն, բավականանում է միմիայն իբր սոսկ կյանքը պահպանելու համար: Մենք բնավ չենք ցանկանում վերացնել անմիջական կյանքը պահպանելու համար գործադրվող աշխատանքի այդ անձնական շուրջումը, վորը չի տալիս վորևէ հավելյալ յեկամուտ՝ ոտարի աշխատանքին տիրանալ կարողանալու համար: Մենք կամենում ենք միայն փոշնչացնել այդ շուրջուման խզուկ բնույթը, վորի շնորհիվ բանվորն ապրում է միմիայն նրա համար, վոր աճեցնի կապիտալը, և ապրում է այնքան ժամանակ, վորքան պահանջում է իշխող դասակարգի շահը <sup>35</sup>):

Բուրժուական հասարակության մեջ կենդանի աշխատանքը յոկ մի միջոց է բազմապատկելու կուտակված աշխատանքը: Կոմմունիստական հասարակության մեջ մթերված աշխատանքը միջոց է միայն բանվորի կյանքը բարձրացնելու, ընդլայնելու, հարստացնելու համար:

Բուրժուական հասարակության մեջ, այդպիսով, անցյալն իշխում է ներկայի վրա, կոմմունիստական հասարակության մեջ՝ ներկան անցյալի վրա: Բուրժուական հասարակության մեջ կապիտալն ինքնուրույն է և անձնական, այնինչ՝ աշխատող անհատը զուրկ է ինքնուրույնությունից և անձնականությունից:

Յե՛վ ահա այդ հարաբերության վերացումն է, վոր բուրժուազիան անվանում է անձնականություն և ազատության վերացումն: Նա, հարկավ իրավացի չե: Սուքն անշուշտ վերաբերում է բուրժուայի անձնականության, բուրժուայի ինքնուրույնության, բուրժուայի ազատության վերացմանը <sup>36</sup>):

Ազատություն ասելով՝ մարդիկ հասկանում են աշխատանքի բուրժուական արտադրական հարաբերություններում առևտրի ազատություն, առ ու ծախի ազատություն:

Չարչիության անկման հետ միասին իհարկե, ընկնում է նաև ազատ շարժիությունը: Մեր բուրժուազիայի զրույցներն ազատ շարժիության ժախն, ինչպես և նրա՝ ազատության վե-

րաբերչալ մյուս բոլոր ճատերը, ընդհանրապես, միտք ու իմաստ ունեն միմիայն կաշկանդված շարչիութիւն, միջնադարյան բազաբացու ստրկութիւն նկատմամբ, ալ վոչ թե շարչիութիւն, բուրժուական արտադրական հարաբերութիւնների և հենց իբրև բուրժուազիայի կոմսունիստական վերացման նկատմամբ:

Դուք վրդովվում եք, վոր մենք վոչնացնել ենք կամենում մասնավոր սեփականութիւնը: Բայց ձեր այժմյան հասարակութիւն մեջ վոչնչացված է նրա անդամների ինն-տասերորդական մասի սեփականութիւնը: Վերջինս գոյութիւն ունի հենց այն պատճառով, վոր այդ ինն-տասերորդական մասի համար գոյութիւն չունի: Դուք, հետեապես, կշտամբում եք մեզ նրա համար, վոր մենք կամենում ենք վոչնչացնել այնպիսի սեփականութիւն, վորի գոյութիւն անհրաժեշտ նախապայմանը կազմում է հասարակութիւն անդամների խոշորագուն՝ մեծամասնութիւն սեփականագրկութիւնը:

Մի խոսքով՝ դուք կշտամբում եք մեզ նրա համար, վոր ուզում ենք ձեր սեփականութիւնը վոչնչացնել: Անշուշտ, մենք այդ կամենում ենք:

Այն վայրկյանից, յերբ աշխատանքն այլևս չկարողանա կապիտալ, փող, հողահաս, կարճ՝ մենաշնորհչալ հասարակական ուժ գառնալ, այսինքն այն վայրկյանից, յերբ անձնական սեփականութիւնն այլևս չկարողանա բուրժուական սեփականութիւն վերածվել — այդ վայրկյանից, ձեր կարծիքով, վոչնչանում է անձնավորութիւնը:

Դուք խոստովանում եք, ուրեմն, վոր անձնավորութիւն տակ ընդունում եք ուրիշ վոչ ալ վորի. բայց լեթե բուրժուային, բուրժուական սեփականատիրոջը: Յե՛վ այդպիսի անձնավորութիւնը պետք է, անշուշտ, վերանա <sup>31</sup>):

Կոմսունիզմը վոչ վորի չի զրկում հասարակական արդունքը յուրացնելու իրավունքից: Նա խլում է միայն այդ յուրացման միջոցով աշխատանքը շահագործելու իրավունքը:

Մարդիկ առարկում են նույնպես, թե մասնավոր սեփականութիւն վերացմամբ կը վերանա նաև ամեն տեսակ գործունեություն ու կը հաստատվի մի ընդհանուր ծուլութիւն:



Յեթե դա այդպես լիներ, բուրժուական հասարակութունը վաղուց պիտի կործանվեր հեղգությունից, վորովհետև նրանք, վորոնք աշխատում են այդ հասարակության մեջ, վոչինչ չեն ձեռք բերում, իսկ նրանք, վորոնք ձեռք են բերում, չեն աշխատում: Այդ մտավարկությունը բղխում է այն տավառուղիներից, թե չի կարող լինել վարձու աշխատանք այնտեղ, ուր այլևս չկա կապիտալ<sup>35</sup>):

Բոլոր առարկությունները, վոր ուղղված են նյութական արդյունքների արտադրության և յուրացման կոմունիստական յեղանակի դեմ, տարածվում են նաև մտավոր արգասիքների արտադրության և յուրացման վրա: Ինչպես վոր բուրժուայի համար դասակարգային սեփականության վոչնչացումը նշանակում է հենց արտադրության վոչնչացումը, այնպես և դասակարգային կրթության վերացումը նրա համար նույնն է, ինչ վոր բնդհանրապես կրթության վերացումը:

Այն կրթությունը, վորի կորուստը նրան այնքան ցավ է պատճառում, վոչ այլ ինչ է, բայց լեթե ահազին մեծամասնության վերածումն մերենայի<sup>36</sup>):

Այլ ևս մի բ վիճի մեզ հետ, յերբ բուրժուական սեփականության վերացման վրա դուք նայում եք ձեր բուրժուական ազատության, կրթության, իրավունքի ըմբռնողությամբ: Ձեր գաղափարներն իրենք արգասիք են բուրժուական արտադրական ու սեփականային հարաբերությունների, ինչպես ձեր իրավունքը ձեր դասակարգի կամքն է՝ որենք դարձրած, մի կամք, վորի բովանդակությունը պայմանավորված է ձեր դասակարգի գոյության նյութական պայմաններով:

Այն շահեկան պատկերացումն, ըստ վորի՝ պատմականորեն առաջ լեկած և արտադրության զարգացման ընթացքում փոփոխության լենթարկված ձեր արտադրական ու սեփականային հարաբերությունները դուք դարձնում եք բնության և բանականության հավիտեական որենք, այդ պատկերացումը հատուկ է ձեզնից առաջ կործանված տիրապետող դասակարգերին: Ինչ վոր դուք հասկանում եք անտիկ սեփականություն ասելով, ինչ վոր դուք հասկանում եք ափատական սեփականություն ասե-

լով, այդ դուք չպիտի հասկանաք բուրժուական սեփականութիւն ասելով<sup>10)</sup>։

Ընտանիքի վերացումն Մայրահեղ արժատականներն անգամ վրդովվում են կոմսոնիստներին այդ ամոթարեր մտադրութիւնից։

Ինչի՞ վրա յե հիմնվում ժամանակակից բուրժուական ընտանիքը։ Կապիտալի, մասնավոր շահի վրա։ Կատարելապես զարգացած՝ նա գոյութիւն ունի միմիայն բուրժուազիայի համար, իսկ իր լրացումն նա գտնում ե պրոլետարիների հարկադրական ընտանեգրկութիւն և հրապարակային պոռնկութիւն մեջ։

Բուրժուական ընտանիքը, բնականաբար, պիտի վերանա իր այդ լրացումների հետ միասին, իսկ չերկուն ել կանճետանան կապիտալի անհետացմամբ։

Դուք կշտամբում եք մեզ, թե մենք վերացնել ենք կամենում ծնողների շահագործումը իրենց մանուկներին։ Մենք ընդունում ենք մեր այդ փոճրագործութիւնը։

Դուք ասում եք, վոր մենք փոխարինելով տնային դաստիարակութիւնը հասարակական դաստիարակութեամբ, վերացնում ենք ամենաճերմ հարաբերութիւնները։

Բայց մի՞թե ձեր դաստիարակութիւնը չի պայմանավորվում հասարակութեամբ։ Մի՞թե նա չի պայմանավորվում հասարակական այն հարաբերութիւններով, վորոնց մեջ դուք դաստիարակում եք հասարակութիւն ուղղակի կամ անուղղակի միջամտութեամբ, գպրոցի միջոցով և այլն։ Կոմսոնիստները չեն, վոր հնարել են հասարակութիւն ազդեցութիւնը դաստիարակութիւն վրա, նրանք ուզում են միայն փոխել դաստիարակութիւն բնույթը, խլել այն իշխող դասակարգի ազդեցութիւնից։

Վորքան ավելի ու ավելի չեն խզվում ընտանեկան բոլոր կապերը պրոլետարների համար, վորքան նրանց գավակներն ավելի ու ավելի չեն դառնում առետրի հասարակ առարկաներ, աշխատանքի գործիքներ՝ շնորհիվ խոշոր արդյունագործութիւն, այնքան ավելի նոզկայի յե գտնում բուրժուական ճամարտակութիւնն ընտանիքի դաստիարակութիւն, ծնողների

ու զավակների անձկայի հարաբերութիւն մասին:

Սակայն դուք, կոմմունիստներդ, ուզում եք մտցնել կանանց համայնացումը, — զազակուծ ե վողջ բուրժուապիան խրմբովին:

Բուրժուան նայում ե իր կնոջ վրա, վորպես արտադրութիւն սոսկ գործիքի: Նա խում ե, վոր արտադրութիւն գործիքները պետք ե համայնորեն ոգտադործվեն և բնականաբար հանգում ե այն մտքին, թե կանայք ևս պետք ե յենթարկվեն համայնացման:

Նա չի կռահում նույնիսկ, վոր խոսքը հենց վերաբերում ե կանանց արտադրական գործիք լինելու վերացմանը:

Բայց չկա ավելի ծիծաղելի բան, քան մեր բուրժուաների խիստ բարոյական վրդովմունքը կանանց համայնացման նկատմամբ: Վոր իբր թե պաշտոնապես քարոզում են կոմմունիստները: Կոմմունիստները կարիք չունեն մտցնելու կանանց համայնացումը, վոր գոյութիւնն ե ունեցել զրեթե միշտ:

Մեր բուրժուաները չբավականանալով, վոր իրենց տրամադրութիւն տակ գտնվում են իրենց բանվորների կանայրն ու աղջկերքը, չեթե չխոսենք պաշտոնական պոռնկութիւն մասին, մեծ զվարճութիւն են գտնում իրենց որինական ամուսիններին փոխադարձաբար զայթակղեցնելու մեջ:

Բուրժուական ամուսնութիւնն իրականութիւն մեջ արամբիների համայնացումն ե: Կոմմունիստներին կարելի չեր ամենաշատը մեղադրել նրանում, վոր նրանք ցանկանում են կանաց կեղծավորաբար քողարկված համայնացումը փոխարինել պաշտոնական քողաղերժ համայնացմամբ: Սակայն ըստ ինքրան հասկանալի չե, վոր այժմյան արտադրական հարաբերութիւնների վերացմամբ՝ պիտի վերանա նաև զրանցից բղխող կանանց համայնացումը, այսինքն պաշտոնական և վողջ-պաշտոնական պոռնկութիւնը<sup>11)</sup>:

Բացի այդ, կոմմունիստներին կշտամբում են, վոր իբր թե նրանք վերացնել են ուզում հայրենիքը, ազգութիւնը:

Բանվորները հայրենիք չունեն: Չի կարելի նրանցից խել այն, ինչ վոր նրանք չունեն: Չգտելով ամենից առաջ նվաճել

բաղաբական իշխանութիւնը, հասնել ազգային մեկ դասակարգի, հաստատել իրեն վորպես ազգ, պրոլետարիատը տակավին մնում է ազգային, թեև վոչ յերբեք այն իմաստով, ինչպես հասկանում է բուրժուազիան:

Ազգային կղզիացումները և ժողովուրդների շահերի հակասութիւններն արդեն ավելի ու ավելի յեն վերանում բուրժուազիայի դարգացման, ազատ առևտրի, համաշխարհային շուկայի, արդունագործական արտադրութիւն միակերպութիւն և դրանց համապատասխան կյանքի հարաբերութիւնների շնորհիվ:

Պրոլետարիատի տիրապետութիւնն ավելի ևս պիտի արագացնի նրանց վերացումը: Նրա ազատադրութիւն ամենաառաջին պայմանը առնվազն բաղաբակիրթ յերկրների միասնական գործակցութիւնն է:

Այն չափով, ինչ չափով վերանալու յէ մի անհատի շահագործուել մյուսի միջոցով, նույն չափով էլ պիտի վերանա մի ազգի շահագործումը մյուսի կողմից:

Միևնույն ազգի մեջ գոյութիւն ունեցող դասակարգային հակասութիւնների վերացման հետ միասին պիտի վերանան նաև ազգերի թշնամական հարաբերութիւնները <sup>42)</sup>:

Կոմունիզմի դեմ հարուցված մեղադրանքները, վոր արվում են կրօնական, փիլիսոփայական և գաղափարախոսական տեսակետից, արժանի չեն մանրամասն քննութիւն:

Պետք է արդյոք առանձին խելամտութիւն՝ հասկանալու համար, թե մարդկանց կյանքի պայմանների, նրանց հասարակական գոյութիւն հետ միասին փոխվում են նաև նրանց մրտապատկերացումները, հայեցողութիւնները և հասկացողութիւնները, մի խոսքով՝ նրանց գիտակցութիւնը:

Ինչ է ապացուցում գաղափարների պատմութիւնը, բայց յեթե այն, վոր մտավոր արտադրութիւնը փոփոխվում է նշութական արտադրութիւն հետ միասին: Մի վորոշ ժամանակի իշխող գաղափարները յեղել են միշտ իշխող դասակարգի գաղափարները միայն:

Քոստում են այն գաղափարների մասին, վորոնք հեղափո-

խում են վողջ հասարակութիւնը. դրանով արտահայտում են միայն այն իրողութիւնը, վոր հին հասարակութեան ծոցում առաջ են յեկել նոր հասարակարգի տարրեր, վոր կյանքի հին պայմանների քայքայման հետ միասին տեղի չեն ունենում հին գաղափարների նման քայքայումն:

Յերբ հին աշխարհը կործանման ընթացքի մեջ եր, հին կրոնները տեղի տվին քրիստոնեական կրոնին: Յերբ 18-րդ դարում քրիստոնեական գաղափարներն ընկան լուսավորութեան գարու գաղափարների հարվածներից, ավատական հասարակութեանն այն միջոցին կյանքի և մահվան պայքար եր մղում տակավին հեղափոխական բուրժուազիայի դեմ: Եղծի ու կրոնի ազատութեան գաղափարներն արտահայտում եյին լոկ ազատ մրցութեան փրապետութիւնը իմացութեան բնագավառում<sup>33</sup>):

«Կրոնական, բարոյական, փիլիսոփայական, քաղաքական, իրավական և այլ գաղափարները, — կասեն մեզ, — ի հարկե լենթարկվել են փոփոխութեան՝ պատմական զարգացման ընթացքում: Սակայն կրոնը, բարոյականութիւնը, փիլիսոփայութիւնը, քաղաքականութիւնը, իրավունքը միշտ պահվել են այդ փոփոխութեան մեջ:

«Բացի այդ՝ գոյութիւն ունեն հավիտենական ճշմարտութիւններ, ինչպես՝ ազատութիւն, արդարութիւն և այլն, վորոնք ընդհանուր են բոլոր հասարակական փուլերի ժամանակ: Այնինչ կոմունիզմը վերացնում ե հավիտենական ճշմարտութիւնները, վերացնում ե կրոնը, բարոյականութիւնը՝ դրանց նոր ձև տալու փոխարեն: Այդպիսով նա հակասում ե «ինչալժամյան պատմական զարգացմանը»:

Ինչի՞ յե հանդում այդ մեզադրանքը: Մինչալժամյան բոլոր հասարակութիւնների պատմութիւնը հիմնված ե յեղել դասակարգային հակասութիւնների վրա, վորոնք զանազան ժամանակաշրջաններում զանազան արտահայտութիւն են ունեցել:

Սակայն ինչ ձևով ել վոր արտահայտված լինեն այդ հակասութիւնները, բոլոր անցած դարերի նկատմամբ ընդհանուր փափա ե հասարակութեան մի մասի շահագործումը մյուս մասի միջոցով: Ուստի զարմանալի չե, վոր բոլոր դարերի հա-

սարակական գիտակցութիւնը՝ հակառակ բոլոր գանազանութիւնների ու տարբերութիւնների՝ ընթացել ե վորոշ ընդհանուր ձևերով, գիտակցութեան այն ձևերով, վորոնք կատարելապես կը վերանան միմիայն դասակարգային հակասութեան լիակատար վերացմամբ:

Կոմունիստական հեղափոխութիւնն ամենաարմատական միջոցն է՝ ջախջախելու գոյութիւն ունեցող սեփականային հարաբերութիւնները: Զարմանալի չէ, վոր նա իր զարգացման ընթացքում արմատականորեն ջախջախելու չի ավանդական գաղափարները <sup>41</sup>):

Սակայն թողնենք բուրժուազիայի առարկութիւնները կոմունիզմի դեմ:

Մենք արդեն վերը տեսանք, վոր բանվորական հեղափոխութեան առաջին քայլը պետք է լինի այն, վոր պրոլետարիատը հասնի տիրող դասակարգի աստիճանին, հաստատի դեմուկրատիա:

Պրոլետարիատն իր քաղաքական իշխանութիւնը պիտի գործադրի բուրժուազիայի վողջ կապիտալը հետզհետե խելու, բոլոր արտադրական միջոցները պետութեան՝ այսինքն իբրև իշխող դասակարգ կազմակերպված պրոլետարիատի՝ ձեռքում կենտրոնացնելու և արտադրական ուժերի զանգվածը հնարավորութեան չափ արագ բազմացնելու համար <sup>42</sup>):

Սկզբում դա, բնականաբար, միմիայն կարող ե տեղի ունենալ սեփականութեան իրավունքի և արտադրութեան բուրժուական հարաբերութիւնների մեջբռնի միջամտութեամբ, հետեւաբար այնպիսի միջոցներով, վորոնք տնտեսական տեսակետից անբավարար և անկայուն են թվում, վորոնք սակայն շարժման ընթացքում վերանալու յեն ինքնին և անխուսափելի յեն, վորպես միջոց՝ վողջ արտադրութեան յեղանակը հեղաշրջելու համար:

Այդ միջոցները տարբեր յերկրների համար, ի հարկե, տարբեր պիտի լինեն:

Սակայն և այնպես ամենաառաջադեմ յերկրներում գրեթե հավասարապես կարող են կիրառվել հետևյալ ընդհանուր մի-

**ջոցները.**

1. Հողային սեփականութեան բռնագրավումն և հողահասփ գործադրուած պետական ծախսերի համար:

2. Պրոգրեսսիվ-յեկամտային բարձր հարկեր:

3. Ժառանգութեան իրավունքի վերացումն:

4. Փախստականների և ըմբոստների սեփականութեան գրավումն:

5. Պետական կապիտալ ու բացառիկ մենաշնորհ ունեցող ազգային բանկի միջոցով վարկի կենտրոնացումն պետութեան ձեռքում:

6. Փոխադրութեան միջոցների կենտրոնացումն պետութեան ձեռքում:

7. Ազգային գործարանների և արտադրական միջոցների բազմապատկումն, հողերի հերկելիացումն ու բարելավումն ընդհանուր ծրագրով:

8. Ամենքի համար հափասար պարտադիր աշխատանք, կազմակերպումն արդյունագործական բանակների, մանավանդ չերկրագործութեան համար:

9. Յերկրագործական և գործարանային աշխատանքի միացումն, քաղաքի և գյուղի տարբերութեան աստիճանական վերացումն:

10. Բոլոր մանուկների հասարակական ու ձրի կրթութիւն: Մանուկների գործարանային աշխատանքի արդի ձևի վերացումն: Կրթութեան միացումը նյութական արտադրութեան հետ և այլն<sup>36</sup>):

Յերբ զարգացման ընթացքում վերանան դասակարգային տարբերութիւնները, և վողջ արտադրութիւնը կենտրոնանա ընկերակցած անհատների ձեռքը, հասարակական իշխանութիւնը կը կորցնի իր բաղաբական բնույթը: Քաղաքական իշխանութիւնն, իր իսկական իմաստով, մի դասակարգի կազմակերպված ույժն է՝ մյուս դասակարգին ճնշելու համար. Յեթե պրոլետարիատը բուրժուազիայի դեմ կռուելու համար անհրաժեշտաբար միանում և կազմում է դասակարգ, հեղափոխութեան միջոցով դառնում իշխող դասակարգ, և վերպես իշխող դասա-

կարգ, բնութիւամբ վերացնուած ե հին արտադրական հարաբե-  
 րութիւնները, ապա նա վերացնուած ե այդ արտադրական հա-  
 րաբերութիւնների հետ դասակարգային հակասութիւն զոյու-  
 թիւն պայմանները, ընդհանրապէս դասակարգերը ե այդպիսով  
եւ, վորպէս դասակարգի, իր սեփական իշխանութիւնը:

Հին բուրժուական հասարակութիւն տեղը իր դասակար-  
 գերով ու դասակարգային հակասութիւններով բռնելու չե մի  
 աստեղիացիա, վորի մեջ յուրաքանչիւրի ազատ զարգացումը  
 պայմանավորված ե լինելու մյուսների ազատ զարգացմամբ <sup>47</sup>);



ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՎ ԿՈՄՄՈՆԻՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. Յեւադիմական սոցիալիզմը

ա) Ավասական սոցիալիզմը

Ճրանսիական և անգլիական արխատուրատիան՝ իր պատմական տեղի համաձայն՝ կոչված էր պարսավազրեք շարարելու արդի բուրժուական հասարակության դեմ: 1830 թվականի Փրանսիական հուլիսյան հեղափոխության և անգլիական վերանորոգչական շարժման ժամանակ նա կրկին անգամ պարտութուն կրեց իր ատելի խրոխտացող հակառակորդից: Այլև խոսք անգամ չեք կարող լինել լուրջ քաղաքական կռիվ մասին: Նրան մնացել էր միայն պայքարել գրական ասպարիզում<sup>\*)</sup>: Բայց և այդ ասպարիզում անհնարին եր դարձել բեստավրացիայի<sup>\*)</sup> ժամանակաշրջանին վերաբերող դարձվածների գործածութունը: Համակրութուն ձեռք բերելու համար արխատուրատիան ստիպված էր առերևութա աչքաթող անել իր շահերը և հանուն շահագործվող բանվոր դասակարգի շահերի ձեռքբերվել իր ամբաստանագիրն ընդդեմ բուրժուազիայի: Նա բավականանում էր իր նոր տերերի հասցելին նախատինքի լերգեր լերգելով և առավել կամ նվազ բոթարեք մարզարելութուններ շնչալով նրանց ականջին:

Այդպես առաջ և լեկել ավատական սոցիալիզմը, վորը կիսով շափ վողր էր, կիսով շափ պարսավազրեք, կիսով շափ անցլալի արձագանք, կիսով շափ ապագայի սպառնալիք, լերբեմն

<sup>\*)</sup> Եսուքը վերաբերում է վոչ թե անգլիական բեստավրացիային (1660 թվականից մինչև 1689 թ.), այլ Փրանսիականին (1814—1830):  
Մանրուրյուն Ենգելսի անգլերեն հրատարակուրյան:

բուրժուազիայի սիրտն եր խոցում իր դառն, սրամիտ և կծու  
 դատազուխուրունեղով, սակայն միշտ գավեշտական տգավորու-  
 թյուն գործում արդի պատմութչան ընթացքն բմբունելու կա-  
 տարլայ անկարությամբ:

Պրոլետարական խզճուկ մախադը իրենց ձեռներին վոր-  
 պես գրոշակ ճոճելով, ավատականներն իրենց շուրջն ելին հա-  
 վարում ժողովրդին: Բայց վերջինս վորքան հաճախ եր նրանց  
 հետևում, այնքան ազելի յեր նկատում հին, ավատական գի-  
 նանշանները նրանց մեջքին ու լքում նրանց՝ բարձրաձայն և  
 անպատկառ ծիծաղով:

Ֆրանսիական լեզիտիմիստների մի մասը և բլերիտասարդ  
 Անգլիան՝ ամենից լավ են ներկայացրել այդ թատերախաղը:

Յերբ ավատականներն ապացուցում են, թե իրենց շահա-  
 գործման լեղանակն այլ և լեղել, բան բուրժուական շահագոր-  
 ծումը, ապա մոռանում են, վոր իրենք շահագործել են մի-  
 անգամայն տարբեր և այժմ վերացած պայմաններում ու հան-  
 գամանքներում: Յերբ նրանք փաստարկում են, թե իրենց  
 իշխանութչան ժամանակ գոյություն չի ունեցել արդի պրո-  
 լետարիատը, ապա մոռանում են, վոր հենց արդի բուրժուա-  
 զիան իրենց հասարակարգի անհրաժեշտ ծնունդն է:

Սակայն նրանք այնքան բիշ են թարցնում իրենց բնա-  
 դատութչան հետադիմական բնույթը, վոր բուրժուազիայի դեմ  
 ուղղած իրենց գլխավոր մեղադրանքի մեջ պարզորեն նկատ-  
 փում և այն միտքը, թե բուրժուական բեժիմի ժամանակ զար-  
 դանում և մի դասակարգ, վորը հոգս և ցնգեցնելու վողջ հին  
 հասարակարգը:

Նրանք կշատարում են բուրժուազիային առափել ևս այն  
 պատճառով, վոր վերջինս ստեղծում և հեղափոխական պրո-  
 լետարիատ, այլ վոչ թե այն պատճառով, վոր ստեղծում և  
 ընդհանրապես պրոլետարիատ:

Իրա համար ել նրանք բազարական գործնականում մաս-  
 նակցում են բանվոր դասակարգի դեմ ուղղած բոլոր բռնիմի-  
 չոցներին, իսկ առորյա կլանքում՝ հակառակ իրենց փրուն ֆր-  
 բազների՝ վոսկի խնձորներ քաղում և հավատարմությունը,

սերը, պատիվը շահավետորեն փոխանակում բրդի, ճակնդեղի և ողու հետ\* 39) :

Ինչպես տերտերը ավատականների հետ միշտ ձեռք-ձեռքի աված է լեղել, այնպես էլ տերտերական սոցիալիզմն ընթանում է ավատական սոցիալիզմի հետ :

Չկա ավելի հեշտ բան, քան բրիստոնեական սակետիզմը գունավորել սոցիալիզմով : Չէ՛ վոր քրիստոնեությունն էլ է մարտել մասնավոր սեփականության դեմ, ընտանիքի դեմ, պետության դեմ : Միթե նա չի քարոզել դրանց փոխարեն բարեգործություն և աղքատություն, ամուրիություն և մարմնասպանություն, խցակեցություն և յեկեղեցի : Քրիստոնեական սոցիալիզմը լոկ որհնամ ջուր է, վորով տերտերը նվիրագործում է ազնվականության զայրույթը :

#### բ) Մանր-բուրժուական սոցիալիզմը

Ավատական արխատկրատիան միակ դասակարգը չէ, վորին տապալել է բուրժուազիան, և վորի կյանքի պայմանները գոսացել ու վերացել են արդի բուրժուական հասարակության մեջ : Միջնադարյան քաղքենիությունն ու մանր գյուղացիությունը ժամանակակից բուրժուազիայի նախորդներն են լեղել : Արդյունագործությունը և առևտուրով ավելի պակաս զարգացած յերկրներում այդ դասակարգը տակավին շարունակում է անվել անող բուրժուազիայի կողքին :

Այն յերկրներում, ուր զարգացել է արդի քաղաքակրթությունը, առաջ է յեկել մի նոր մանր-բուրժուազիա, վո-

\* Դա վերաբերում է զլխավորապես Գերմանիային, ուր հոգային արխատկրատիան և յունկերները կառավարիչների ոգնությունը՝ իրենց հաշվով մշակում են իրենց կալվածքների խոշոր մասն ու միաժամանակ ճակնդեղի և ողու խոշոր արտադրողներն են : Ավելի հարուստ բրիտանական արխատկրատիան իրեն պահում է ավելի բարձր, բայց նա ևս հրաշալի կերպով կարողանում է վարձատրվել հոգահասի անկման փոխարեն, թույլ տալով իր անվամբ քողարկել առավել կամ նրվող շափով կասկածելի ակցիոններիական ընկերությունների մութ գործերը (Ենդելս) :

ըր տարուբերվում ե պրօբնաարիատի ե բուրժուազիայի միջև ու միշտ առաջ ե գալիս վորպես բուրժուական հասարակութիան լրացուցիչ մասը: Սակայն մրցումը միշտ նետում ե այդ գասակարգի անդամներին պրոլետարիատի շարքը: Սոշոր արդյունազորժութիան զարգացման ընթացքում նրանք, այո, տեսնում են ժամանակը, չերբ իրենք պիտի ամբողջովին վերանան վորպես արդի հասարակութիան ինքնուրույն մաս ե փոխարինվեն վերակացուներով ու ծառայողներով՝ առևարի, մանուֆակտուրայի ե հողագործութիան մեջ:

Այնպիսի չերկրներում, վորպիսին ե Ֆրանսիան, ուր գյուղացիութիւնը կազմում ե բնակչութիան կեսից ավելին, պրօլետարիատի պաշտպան գրողները բուրժուական հասարակարգի բնագատութիան մեջ, բնականաբար, պիտի կիրառելին մանր-բուրժուական ե մանր-գյուղացիական մասշտաբ, պիտի նայելին բանվորների կուսակցութիան վրա մանր-բուրժուազիայի տեսակետից: Այդպիսով առաջ ե չեկել մանր բուրժուական սոցիալիզմը: Այդ տեսակի գրականութիան պարագլուխն ե Սիամոնդին վոշ միաշն Ֆրանսիայում, այլ ե Անգլիայում:

Այդ սոցիալիզմը մեծ սրամտութիամբ դրսևորել ե արդի արտադրական հարաբերութիւնների հակասութիւնները: Նա մերկացրել ե տնտեսագետների կեղծավոր քողարկումները: Նա անհերքելիորեն ապացուցել ե մեքենաների ե աշխատանքի բաժանման կործանարար ազդեցութիւնը, կապիտալների ե հողատիրութիան կոնցենտրացիան, գերարտադրութիւնը, ճգնաժամերը, մանր բուրժուականների ե գյուղացիների անխուսափելի կործանումը, պրոլետարիատի թշվառութիւնը, արտադրութիան անարխիան, հարստութիան ազդակող անհավասար բաշխումը, կործանարար արդյունազորժական պատերազմը ազգերի միջև, հին բարբերի, ընտանեկան հին հարաբերութիւնների, հին ազգութիւնների քայքայումը:

Իր գրական բովանդակութիամբ, սակայն, այդ սոցիալիզմը ցանկանում ե կամ վերականգնել արտադրութիան ու հողորդակցութիան հին միջոցները ե դրանց հետ միասին հին սեփականային հարաբերութիւնները ու հին հասարակութիւնը,

կամ ել բռնի կերպով վերստին պարփակել արտագրութիան և հազարակեցութիան արդի միջոցներն այն հին սեփականային հարաբերութիւնների շրջանակում, վոր նրանք խորտակել են և խորտակեցին: Յերկու գեպբումն ել նա հետադիմական ե և միաժամանակ ուտոպիստական:

Համբարութիւնը ժանուֆակաուրայում և նահապետական տնտեսութիւնը գլուղում— ահա թե վորն ենրա վերջին խոսքը:

Իր հետագա զարգացման ընթացքում այդ ուղղութիւնը կրում և լերկչատ անհանգստութիւն բնութիւնը<sup>51</sup>):

գ) Գերմանական կամ «Յեմաթե» սոցիալիզմը

Ֆրանսիայի սոցիալիստական և կոմմունիստական գրականութիւնը, վոր ծագել է տիրող բուրժուազիայի ճնշման տակ և վորը գրական արտահայտութիւնն է այդ տիրապետութիւնի դեմ ուղղած կռիւի, ներմուծվեց Գերմանիա այն ժամանակ, յերբ բուրժուազիան նոր եր սկսել իր պայքարը ազատական միահեծանութիւնի դեմ:

Գերմանական փիլիսոփաները, կիսափիլիսոփաներն ու փիլազոգիքները հ. փշտակվեցին այդ գրականութիւնը, մոռանալով, վոր Ֆրանսիական գրականութիւնն հետ միասին Գերմանիա շեն ներմուծվել նաև Ֆրանսիական կյանքի պայմանները: Գերմանիայի հասարակական հարաբերութիւնները նկատմամբ Ֆրանսիական գրականութիւնը կորցրեց իր անմիջական-գործնական վողջ նշանակութիւնը և ընդունեց զուտ գրական արտահայտութիւն: Նա այնտեղ պարսպ մտատեսութիւնն եր, վոր յերազում եր մարդկային եյութիւնը կյանքում մարմնացնելու մասին: Այդպես՝ 18-րդ դարու գերմանական փիլիսոփաների համար առաջին Ֆրանսիական հեղափոխութիւնն պահանջները «գործնական բանականութիւն» պահանջներ ելին ընդհանրապես, իսկ Ֆրանսիական հեղափոխական բուրժուազիայի կամքի արտահայտութիւնները նրանց աչքում ուրիշ նշանակութիւն չունեին, բայց լեթե զուտ կամքի որենքներ, ճշմարիտ մարդկային կամքի, ինչպես նա պետք է լինի:

Գերմանական գրողների բացառիկ աշխատանքն այն եր,

վոր Ֆրանսիական նոր դադափարները հարմարեցնում էլին իրենց հին փիլիսոփայական խղճին, ավելի ճիշտ, յուրացնում էլին Ֆրանսիական դադափարները, մնալով իրենց փիլիսոփայական տեսակետի վրա:

Այդ յուրացումը տեղի յեր ունենում այն լեզանակով, ինչ լեզանակով ընդհանրապես յուր սցնում են ոտար լեզուն, այսինքն թարգմանության միջոցով:

Հայտնի լե, վոր վանականները հին հեթանոսական ժամանակաշրջանի դասական ձեռագրերի մեջ մտցնում էլին կաթոլիկ սրբերի անհեթեթ վարքագրությունը: Գերմանական գրողները հակառակն էլին վարվում Ֆրանսիական աշխարհիկ գրականության նկատմամբ: Ֆրանսիական բնագրի մեջ նրանք դնում էլին իրենց փիլիսոփայական անմտությունները: Որինակի համար, փողային հարարերությունների Ֆրանսիական քննադատության տակ նրանք անց էլին կացնում «մարդկության էությունը դրսևորումն», բուրժուական պետության Ֆրանսիական քննադատության տակ անց էլին կացնում «վերացականորեն ընդհանուրի իշխանության վերացումը» և այլն:

Քեղաթյուրելով Ֆրանսիական դատողությունները փիլիսոփայական ֆուդարանությունը՝ նրանք այդ խեղաթյուրումները մկրտել էլին «գործի փիլիսոփայություն», «ճշմարիտ սոցիալիզմ», «սոցիալիզմի գերմանական գիտություն», «սոցիալիզմի փիլիսոփայական հիմնավորումն» և այլ անուններով:

Ֆրանսիական սոցիալիստական-կոմմունիստական գրականությունն այդպիսով կատարելապես ամլացավ: Յեվ վորովհետև գերմանացու ձեռքում այդ գրականությունը դադարեց արտահայտելու մի դասակարգի կոիվը մյուս դասակարգի դեմ, ապա գերմանացին լեկավ ալն համոզման, թե ինքը հաղթահարել է «ֆրանսիական միակողմանիությունը», գրել է ճշմարիտ կարիքների տեղը ճշմարտության կարիքը, բանվորի շահերի տեղը՝ մարդկային էության շահերը, ընդհանրապես մարդու շահերը, մարդու, վորը չի պատկանում վորևե դասակարգի, չի պատկանում ընդհանրապես իրականության, այլ պատկանում է փիլիսոփայական ֆանտազիայի մշուշապատ յերկնքին:

Գերմանական այդ սոցիալիզմը, վոր այնքան լուրջ և հանդիսավոր կերպով եր գրադավել անաշոյ մտավոր մարզանքներով և այնքան ազմկալից եր փողահարել գրանց մասին, հետզհետե կորցնում ե, սակայն, իր սոփեստական անմեղութունը:

Գերմանական, մանավանդ պրուսական բուրժուազիայի կռիվն ավատականների և բացարձակ միապետութեան դեմ, կարճ՝ ազատամիտ շարժումն ընդունում ե ավելի լուրջ բնույթ:

«Ճշմարիտ» սոցիալիզմը այդպիսով ցանկալի առիթ ունեցավ քաղաքական շարժմանը հակադրելու սոցիալիստական պահանջներ, ավանդական անեծք շոալիելու իրերալիզմի դեմ, ներկայացուցչական կառավարութեան դեմ, բուրժուական մրցման, մամուլի բուրժուական ազատութեան, բուրժուական իրավունքի, բուրժուական ազատութեան ու հավասարութեան դեմ և ժողովրդական զանգվածներին քարոզելու, թե այդ բուրժուական շարժման մեջ նրանք վոչինչ չեն ստանալու. գեռ ավելին՝ ամեն ինչ կորցնելու լինու: Գերմանական սոցիալիզմը միանգամայն տեղին եր մոռանում, վոր Ֆրանսիական բննադատութունը, վորի խղճուկ արձագանքն եր ինքը, լինթազրոււմ եր արդի բուրժուական հասարակութունը՝ իր նյութական համապատասխան պայմաններով ու քաղաքական սահմանադրութեամբ, այսինքն այն նախադրւալները, վորոնց նվաճելու մասին հենց նոր ե միայն խոսք բացվել Գերմանիայում:

Նա ծառայում եր գերմանական միապետական կառավարութեանը և տերտերներից, վարժապետներից, շինական բիրտազնվականներից ու բյուրոկրատներից բաղկացած նրա վոհմակին, վորպես ցանկալի խրովիլակի՝ սպառնալից գլուխ բարձրացնող բուրժուազիայի դեմ:

Նա կազմում եր քաղցրահամ լրացումն մտրակի այն դառնագին հարվածների, հրացանի այն մահաբեր գնդակների, վորոնց միջոցով այդ կառավարութունը ճնշում եր գերմանական բանվորութեան ազատամարտիչութունները:

Լինելով այդորինակ գնեք կառավարութեան ձեռքին ընդդեմ գերմանական բուրժուազիայի, «Ճշմարիտ» սոցիալիզմը նաև անմիջականորեն արտահայտում եր հետադիմական շահեր:

գերմանական մանր-բուրժուազիայի շահերը: Գերմանիայում XVI-րդ դարուց մնացած և այլ ժամանակից ի վեր կանազան ձևերով կրկին ու կրկին յերևան յեկող այդ մանր քաղքենիութունը կազմում և գոյութուն ունեցող կարգերի իսկական հասարակական հիմքը:

Այդ մանր քաղքենիության պահպանումը պահպանումն և Գերմանիայում գոյութուն ունեցող կարգերի: Բուրժուազիայի արդյունագործական և քաղաքական տիրապետութունից նա չերկուցող սպասում և իր անտարակույս կործանման, վորպես հետևանքի՝ մի կողմից կապիտալի կոնցենտրացիայի, իսկ մյուս կողմից՝ հեղափոխական պրոլետարիատի հանդես գալու: Նրան թվում եր, թե «ճշմարիտ» սոցիալիզմը մի գնդակով յերկու վորս և անուժ: Յեղ այդ սոցիալիզմը տարածվում եր համաճարակի նման:

Մտատեսական վստայնից հյուսած պերճախոտության փարթամ ծաղիկներով նկարագարդած, սիրառատ դպացմունքի արցունքով թրջած պատմուճանը, վորով գերմանական սոցիալիստները պարուրում եյին իրենց մեկ-յեր, ու վոսկրացած «հավիտենական ճշմարտությունները», միայն աջակցում եր նրանց ապրանքի տարածմանը այդ քաղքենիության մեջ:

Իր կողմից գերմանական սոցիալիզմն ավելի ու ավելի չեր տեսնում, վոր յուր կոչումն և՛ լինել այդ շերտի վեհապանծ ներկայացուցիչը:

Նա հուշակում եր գերմանական ազգը նորմալ ազգ, իսկ գերմանական քաղքենուն՝ նորմալ մարդ: Վերջինիս յուրաքանչյուր ստորությանը նա տալիս եր քողարկված, բարձր սոցիալիստական իմաստ, վորն ստանում եր հակառակ նշանակութուն: Հանդես գալով կոմունիզմի «խիստ կործանարար» ուղղության դեմ և հուշակելով իր անկուսակցական անաշտությունը գասակարգային բոլոր պայքարներից վեր, նա հանեց միայն վերջին յեզրակացութիւնը: Շատ քիչ բացառությամբ այն բոլոր այսպես կոչված սոցիալիստական և կոմունիստական գրվածքները, վոր ձեռք ձեռք են անցնում Գերմանիայում,



իրապես պատկանում են այդ կեդտոտ ու ջլատող զբաղանու-  
թյանը\* 52)։

## 2. Պահպանողական կամ բուրժուական սոցիալիզմը

Բուրժուազիայի մի ժասը ցանկանում է վերացնել սոցիա-  
լական թշվառությունները, վորպեսզի ապահովե բուրժուա-  
կան հասարակութան կայունությունը։

Այդպես մտածողների շարքին են պատկանում անտեսա-  
գեաները, բարեբարները, մարդասերները, բանվոր դասակար-  
գի գրությունը բարելավողները, բարեգործություն կազմա-  
կերպողները, անասուններին հովանավորողները, ժուժկայու-  
թյուն բարոգողներն ու ամեն տեսակ ժանր-մունք բարենորո-  
գիչները։ Այդ բուրժուական սոցիալիզմը մշակել է մինչև ան-  
գամ ամբողջ սխտեմներ։

Վորպես որինակ նշենք Պրուդոնի «Philosophie de la Misère»  
«Թշվառության փիլիսոփայությունը» 53)։

Բուրժուական սոցիալիստները ցանկանում են պահել  
արդի հասարակութան հիմքերը՝ առանց զբանցից անհրաժեշ-  
տաբար բղձող կոիվների ու վտանգների։ Նրանք ցանկանում  
են պահել գոյություն ունեցող հասարակությունը՝ առանց նը-  
րան հեղափոխականացնող ու կործանող տարրերի։ Նրանք  
ցանկանում են ունենալ բուրժուազիա՝ առանց պրոլետարիա-  
տի։ Բուրժուազիային բնականաբար թվում է ամենալավ այն  
աշխարհը, ուր ինքն է իշխում։ Այդ մխիթարական պատկերա-  
ցումը բուրժուական սոցիալիստները վերածել են քիչ թե շատ  
ամբողջացրած սխտեմի։ Յեթե այդ սոցիալիզմը հորդորում է  
բանվորներին իրագործել իր սխտեմները և այդպիսով վտաք  
զնել նոր Յերուսաղեմ, ապա նա եապես պահանջում է մի-  
այն, վոր պրոլետարիատը շարունակի ապրել այժմյան հասա-

\* ) 1848 թվականի հեղափոխության հոգմը վերջ տվավ այդ վո-  
գորմելի ուղղությանը ու թեաթափ արավ նրա ներկայացուցիչներին՝  
զբաղվելու սոցիալիզմով։ Այդ ուղղության գլխավոր ներկայացուցիչն  
ու դասական տիպարը պարոն Կարլ Պրուդոնն է։

բակութեան մեջ, սակայն իր գլխից հանի այդ հասարակութիւնն ասելու միտքը:

Այդ սոցիալիզմի լերկորոզ ձևը, վոր ավելի պակաս եր սխտեմի լենթարկված, բայց ավելի շատ գործնական եր, ձրդտում եր լետ պահել բանվոր դասակարգին ամեն մի հեղափոխական շարժումից, ճղնելով ապացուցել, վոր վոչ թե այս կամ այն քաղաքական փոփոխութիւնը, այլ լոկ կյանքի նյութական պայմանների, անտեսական հարաբերութիւնների փոփոխութիւնը կարող ե ոգտակար լինել պրոլետարիատին: Կյանքի նյութական պայմանների փոփոխութիւն ասելով այդ սոցիալիզմը, սակայն, հասկանում ե վոչ թե արտադրութեան բուրժուական հարաբերութիւնների վերացումն, վոր կարող ե տեղի ունենայ միմիայն հեղափոխական ճանապարհով, այլ վարչական բարեխօսումներ, վորոնք տեղի պիտի ունենան նույն արտադրական հարաբերութիւնների հիման վրա ե վորոնք, հետևապես, վոչինչ չեն փոխելու կապիտալի ու վարձու աշխատանքի հարաբերութեան մեջ, այլ լավագույն դեպքում պակասեցնելու լեն բուրժուազիայի տիրապետութեան ծախքերը ե պաշտ կերպարանը են տալու իր պետական անտեսութեանը:

Իրեն համապատասխան արտահայտութիւն բուրժուական սոցիալիզմը գտնում ե այն ժամանակ միայն, լերը վերածվում ե ճարտասանական ձևի:

Ազատ առևտուր՝ հանուն բանվոր դասակարգի շահերի. հովանավորող մանր՝ հանուն բանվոր դասակարգի շահերի. մեկուսացած բանաարկութիւն՝ հանուն բանվոր դասակարգի շահերի, — ահա բուրժուական սոցիալիզմի վերջին ու միակ լուրջ խոսքը:

Բուրժուազիայի սոցիալիզմը հաստատում ե միայն այն, վոր բուրժուական բուրժուա յե՝ հանուն բանվոր դասակարգի շահերի<sup>34</sup>):

### 3. Քննադատական-ուսուպիսական սոցիալիզմը յեվ կոմունիզմը

Մենք այստեղ չենք խոսում այն գրականության մասին, վորն արդի բոլոր մեծ հեղափոխությունների ժամանակ արտահայտել և պրոլետարիատի պահանջները (Բարյոֆի և մյուսների գրվածքները)<sup>55</sup>,

Իր սեփական դասակարգային շահերն անմիջապես հաղթականորեն առաջ տանելու սկզբնական փորձերը, վոր տեղի չեն ունեցել ընդհանուր հուզմունքի ժամանակ ավատական հասարակության հեղաշրջման շրջանում, անհրաժեշտաբար անհաջողության պիտի մասնավելյին հենց իր պրոլետարիատի անզարգացած գրության, ինչպես նաև նրա ազատագրության նյութական պայմանների բացակայության հետևանքով, վորոնք արգասիք են հենց բուրժուական ժամանակաշրջանի, Պրոլետարիատի այդ առաջին շարժման հետ առաջ չեկած հեղափոխական գրականությունը պետք և իր բովանդակությամբ լինեն անհրաժեշտաբար հետադիմական: Նա բարոգուծ և մի բնդհանուր ճգնավորություն և գոհնիկ ու անշնորհք հավասարություն:

Իսկական սոցիալիստական և կոմունիստական սխտեմները, Սեն-Սիմոնի, Ժուրյեյի, Ռուենի և մյուսների սխտեմները, հանգես են գալիս պրոլետարիատի և բուրժուազիայի միջև տեղի ունեցող կռվի առաջին անզարգացած շրջանում, ինչպես նկարագրել ենք վերը (տես «Բուրժուազիա և պրոլետարիատ» գլուխը)<sup>56</sup>,

Այդ սխտեմներն ստեղծագործողները թեև արդեն տեսնում են դասակարգերի հակասությունը, ինչպես նաև տիրոգ հասարակության ծոցուծ բայրալից տարրերի ազդեցությունը սակայն պրոլետարիատի մեջ չեյին նկատում վորևէ պատմական ինքնագործունեություն, վորևէ ուրույն բաղաբական շարժում:

Յեվ վորովհետև դասակարգային հակասությունը զարգանում և արդյունագործության զարգացման հետ զուգընթաց

ուստի նրանք, շտեմնելով նմանապես պրոլատարիատի ազատագրութիւնն նյութական պայմանները, ջանուած են զտնել մի սոցիալական գիտութիւն, սոցիալական որեւնքներ՝ այդ պայմաններն ստեղծելու համար:

Հասարակական գործունեւթիւնն տեղը պիտի գրավի նրանց անձնական ստեղծագործութիւնը, ազատագրութիւնն պատմական պայմանների տեղը պիտի բռնեն յերեակոյական պայմանները, պրոլետարիատի, վորպես ուրույն դասակարգի հետզհետե դարգացող կազմակերպութիւնն տեղը պիտի բռնի հասարակութիւնն նրանց մտահղացած կազմակերպութիւնը: Գայիք համաշխարհային պատմութիւնը՝ նրանց կարծիքով պարփակելու յե իր մեջ լոկ իրենց ստեղծած հասարակական ծրագրերի քարոզն ու իրագործումը:

Նրանք, իհարկե, գիտակցում են, վոր իրենց ծրագրերով պաշտպանում են գլխավորապես բանվոր դասակարգի՝ իրրե ամենատանջված դասակարգի՝ շահը: Յեվ հենց ամենատանջվող դասակարգի տեսակետից ել նրանց համար գոյութիւն ունի պրոլատարիատը:

Դասակարգերի կռիւ անդարգացած ձևը, ինչպես նաև նրանց հասարակական դիրքը կազմել են տալիս այն համոզումը, թէ իրենք դուրս են դասակարգային հակասութիւնից: Նրանք կամենում են հասարակութիւնն բոլոր անգամների կյանքի պայմանները բարելավել, անշամ նրանց, վորոնք լավ պայմանների մեջ են: Այդ պատճառով ել, առանց խարութիւնն, նրանք կոչ են անում վողջ հասարակութիւնը, այո, մինչև իսկ գերագանցապես տիրող դասակարգին: Չե՛ վոր բավական ե միայն ըմբռնել նրանց սխտեմը՝ լավագույն հասարակութիւնն լավագույն ծրագիրն ընդունելու համար:

Այդ պատճառով ել նրանք ժխտում են ամեն մի բաղաբական, մանավանդ ամեն մի հեղափոխական գործունեւթիւն: Նրանք ուզում են հասնել իրենց նպատակին խողազ ճանապարհով և վորձ անում ժանր, բնականաբար տնջաջող երսպերիմենտներով, որինակի գորութիւնը ուղի հարթել նոր հասարակական ավետարանի համար:

Ազազա հասարակութեան ֆանտաստիկ նկարագրութիւնը դրսևորվում է այն ժամանակ, յերբ պրոլետարիատը տակավին խիստ անզարգացած դրութեան մեջ է՝ հետևաբար ֆանտաստիկ կերպով է պատկերացնում իր սեփական դիրքը, իր առաջին նախազգացումով լի խանդը հասարակութեան ընդհանուր վերակազմութեան նկատմամբ:

Այդ սոցիալիստական և կոմմունիստական գրվածքները, սակայն, ունեն նաև քննադտական տարրեր: Նրանք շոշափում են գոյութիւն ունցող հասարակութեան բոլոր հիմքերը: Իրանով նրանք մեծապես արժեքավոր նյութ են հայթայթել քանվորների շուսավորութեան գործին: Ազազա հասարակութեան վերաբերյալ նրանց դրական առաջադրութիւնները, որինակի համար, քաղաքի և գյուղի հակադրութեան, ընտանիքի, մասնավոր սեփականութեան և վարձու աշխատանքի վերացումը, հասարակական ներգաշնարտութեան հայտարարումը, պետութեան վերածումն արտադրութեան սոսկ վարչութեան,—նրանց այդ բոլոր առաջադրութիւններն արատհայտում են այն գաղափարգային հակասութեան վերացման անհրաժեշտութիւնը, վորը հենց նոր է սկսել զարգանալ և ծանոթ է նրանց իր սկզբնական ձևագուրկ անորոշութեամբ: Ուստի և այդ առաջադրութիւնները տակավին ունեն զուտ ուտոպիստական իմաստ:

Քննադատական-ուտոպիստական սոցիալիզմի և կոմմունիզմի նշանակութիւնը պատմական զարգացման նկատմամբ գանվում է հակառակ հարաբերութեան մեջ: Վորքան զարգանում ու ձևավորվում է գասակարգային կոիվր, նույնքան գասակարգային կոիվց վեր լինելու այդ յերևակայական ձգտումը, գասակարգային կոիվր այդ յերևակայական ժխտումը, կորցնում է իր վողջ գործնական արժեքը, վողջ տեսական արգարացումը: Ուստի՝ չիթե այդ սխտեմների հիմնադիրները շատ կողմերով հեղափոխական ելին, ապա նրանց աշակերտներն ամեն անգամ կազմում են հետադիմական ադանդներ: Նրանք կառչած են մնում իրենց ուսուցիչների հին մտածելակերպին, աչբաթող անելով պրոլետարիատի պատմական առաջխաղացումը: Այդ պատճառով նրանք հետևողականորեն ձգտում են բթացնել

դոսակարգային կոիվր, մեղմացնել դասակարգային հակասութ-  
 յունները ն. անը տակավին շարունակում են յերազել իրենց  
 հասարակական ուսուցիչի իրազորման մասին, ֆալանստեր-  
 ներ հաստատելու, կոմունիստական գաղութներ հիմնելու,  
 փոքրիկ Իկարիա\*) — նոր Յերուսաղեմի այդ փոքրադիր հրա-  
 տարակութունը — ստեղծելու մասին: Յեւ այդ բոլոր մտացա-  
 ծին ամբողջների կառուցման համար նրանք հարկադրված են  
 դիմել բուրժուական սրտի մաքրասիրությանը և նրա վսակու-  
 քսակին: Նրանք հետզհետե անցնում են վերը նկարագրած հե-  
 տադիմական կամ պահպանողական սոցիալիստների շարքը,  
 տարբերվելով վերջիններից միմիայն սխտեմատիկ պեղանտու-  
 թյամբ, իրենց սոցիալական դիտության հրաշագործութուն-  
 ների մոլեռանդ նախապաշարումով:

Այդ և ահա պատճառը, վոր նրանք մեծ զայրույթով հա-  
 կառակում են բանվորների ամեն մի քաղաքական շարժմանը,  
 վորը նրանց կարծիքով, հետևանք և միայն նոր ավետարանի  
 կույր անհավատության<sup>57)</sup>:

Անդդիալում ուսենիստներն են ընդդիմադրում շարախտ-  
 ներին, իսկ Թրանսիալում՝ ֆուրյերիստները րեֆորմիստներին<sup>58)</sup>:

\*) Home colonies (գաղութ յերկրի ներսում) անվանում էր  
 Ռուսներ իր կոմունիստական տիպար հասարակութունները: Ֆալանս-  
 տեր Ֆուրյեյի ծրագրած հասարակական պալատների անունն էր: Ի-  
 կարիա կոչվում էր այն ուսուցիչական-յերևակայական յերկիրը, վորի  
 կոմունիստական հիմնարկութունները նկարագրել էր Կարեն:

ԿՈՄՄՈՒՆԻՍՏՆԵՐԻ ԴԻՐՔԸ ԴԵՊԻ ԶԱՆԱԶԱՆ ԸՆԴԴԻՄԱԴԻՐ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Յերկրորդ զիխում մեր ասածներից ինքնին հասկանալի լի գտանում կոմմունիստների վերաբերմունքը դեպի արդեն գոյություն ունեցող բանվորական կուսակցությունները, հետևապես և նրանց վերաբերմունքը դեպի շարտիստները Անգլիայում ու ազրաբային բեֆորմիստները Հյուսիսային Ամերիկայում<sup>55</sup>).

Նրանք կոպում են հանուն բանվոր դասակարգի մերձավոր նպատակների ու շահերի իրագործման, բայց և ներկայիս շարժման մեջ նրանք միևնույն ժամանակ պաշտպանում են շարժման ապագան: Մրանսխայում կոմմունիստները հարում են սոցիալիստական-դեմոկրատական\*) կուսակցությանը՝ պահպանողական ու արմատական բուրժուազիայի դեմ, առանց ստեղծելու հրաժարվելու բննազտական վերաբերմունքի իրավունքից դեպի հեղափոխական ավանդությունից առաջ յեկած ֆրազներն ու պատրանքները:

Շվեյցարիայում նրանք պաշտպանում են արմատականներին, առանց մոռանալու, վոր այդ կուսակցությունը բաղկացած է ներքին տարրերից, մասամբ դեմոկրատական սոցիալիստներից՝ ֆրանսիական իմաստով, մասամբ էլ արմատական բուրժուաներից<sup>60</sup>).

\*) Մրանսխայում այն ժամանակ սոցիալիստական-դեմոկրատական կոչվող կուսակցության քաղաքական ներկայացուցիչն էր Լեդրյու Բոլենը, իսկ գրական ներկայացուցիչը՝ Լուի-Բլանը. այդ կուսակցությունը, հետևապես, տարբերվում էր այսօրվա գերմանական սոցիալ-դեմոկրատիայից, ինչպես յերկիրքն ու յերկիրն իրարից:

Լեհերի մեջ կոմսունիստները պաշտպանում են այն կուսակցութիւնը, վորը ազրարային հեղափոխութիւնը համարում է ազդային ազատագրութեան նախապայտանք, հենց այն կուսակցութիւնը, վորն առաջ էր բերել 1846 թվականի կրակովյան ապստամբութիւնը<sup>61</sup>):

Փերմանիայում կոմսունիստական կուսակցութիւնը պարարում է բուրժուազիայի հետ միասին ընդդէմ բացարձակ միապետութեան, ազատական հողատեմականութեան և մանր-բազրենիութեան, քանի դեռ բուրժուազիան օրամաղրված է հեղափոխականորեն:

Սակայն վոչ մի վայրկյան նա չի դադարում կարելուն շափ լուսավորելու բանվորների գիտակցութիւնը՝ բուրժուազիայի և սրբութարիատի թշնամական հակադրութեան նկատմամբ, վորպեսզի գերմանական բանվորները՝ բուրժուազիայի տիրապետութեամբ ստեղծվելիք հասարակական-քաղաքական պայմանները դարձնեն զենք՝ իսկույն և լեթ հենց բուրժուազիայի դէմ ուղղելու համար, վորպեսզի Փերմանիայի հետադիմական դասակարգերի անկումից անմիջապես հետո սկսվի կրոնի վր հենց բուրժուազիայի դէմ:

Յեթե կոմսունիստներն իրենց գլխավոր ուշադրութիւնն ուղղում են Փերմանիայի վրա, ապա դա այն պատճառով, վոր նա կանգնած է բուրժուական հեղափոխութեան նախորդակին և վոր նա կատարելու լեհեղաշրջումն ընդհանրապես լեվրոպական քաղաքակրթութեան ավելի առաջագիւ պայմաններում ու շատ ավելի զարգացած պրոլետարիատով, քան Անգլիան 17-րդ, իսկ Յրանսիան 18-րդ դարում: Հետեապես գերմանական բուրժուական հեղափոխութիւնը կարող է պրոլետարական հեղափոխութեան անմիջական նախերգանքը դուռնալ միայն<sup>62</sup>):

Մի խոսքով՝ կոմսունիստներն ամենուրեք պաշտպանում են ամեն մի հեղափոխական շարժում, վորն ուղղված է գոյութիւն ունեցող հասարակական ու քաղաքական կացութեան դէմ:

Այդ բոլոր շարժումների մեջ նրանք առաջ են քաշում սե-



փախանութիան հարցը, վորպէս հիմնական հարց, անկախ նր  
նից, թե վորքան և զարգացած այդ հարցը:

Կոմմունիստները ձգտում են, վերջապես, միաբանութի  
ու համաձայնութիւն հաստատել բոլոր յերկրների դեմոկ  
րատիան կուսակցութիւնների հետ:

Կոմմունիստներն ավելորդ են համարում ծածկել իրեն  
հայացքներն ու մտադրութիւնները: Նրանք բացի ի բաց հայտ  
բարում են, վոր իրենց նպատակները կարող են իրագործվել վո  
ժամանակակից հասարակակարգի տապալման միջոցով միայ  
ն:

Թող սարսափեն տիրապետող դասակարգերը կոմմունի  
ստական հեղափոխութիւնից: Պրոլետարները վոչինչ չուն  
կորցնելու այդ հեղափոխութիւնի մեջ, բացի իրենց շղթաները  
նրանք վաստակելու յեն մի ամբողջ աշխարհ:

**Պրոլետարներ բոլոր յերկրների՝ միացե՛ք:**

## Յ Ա Ն Կ

	Էջ.
«Մանիֆեստի» հաշերեն թարգմանությունների առիթով . . . . .	III
Առաջարկներ 1—V . . . . .	VII
Կոմմունիստական Կուսակցության Մանիֆեստը . . . . .	23
Բուրժուաներ և պրոլետարներ . . . . .	24
Պրոլետարները և Կոմմունիստները . . . . .	41
Սոցիալիստական և կոմմունիստական գրականությունը . . . . .	54
Կոմմունիստների դիրքը դեպի դանազան ընդդիմադիր կուսակցությունները . . . . .	68

### Ը ն ր ե ռ զ ո ՞ Ն Ե Ր Ի Ն Ի

«Մանիֆեստ»-ի տեքստի մեջ պատանոց 1—62 թվանշանները գերաբերում են Բյազանովի ծանոթություններով լույս տեսնող հրատարակության, զոր կատարվում և այս մեկի հետ միաժամանակ: Ընթերցողների գորոշ հարմարությունները նկատի ունենալով, «Մանիֆեստ»-ի այս առանձին հրատարակության մեջ ևս թողինք թվանշանները մնալու:

Հ ր ա տ ա ր ա կ ու ր յ ու Ն



10m

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0028715

A 1888

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

Կարլ Մարե.— Կարճու աշխատանք և կապիտալ	
II. Շահումյանի թարգմ.	15 կ.
Ռյազանով, Գ. Մարբա և Մեզիլա	1 ս. 30 կ.
Լեհիճ, Ն.— Մարբուի և մարբուի մասին	— 75 կ.
Սեմկովսկի.— Մարբուստական քրեստոմատիա	1 ս. 25 կ.

ՄԱՍՈՒԼԻ ՏՍԿ Ե ՅԵՎ ՇՈՒՏՈՎ ԼՈՒՅՍ ԿՏԵՍԻ

«Կամուրջատական Մանրիկատ», Գ. Ռյազանովի ընդարձակ  
ձանթաթյուններով:

Դիմել Պետրասի բոլոր գրախանութներին  
յեւ թաժանմունքներին